

1320

«ՅԱՌԱՋ»-ի ԳՐԱԴԱՐԱՆ

05 JAN 2010
05 FEB 2007

Am-1239
97

Վ Ա Հ Է

ԱՆՋԱՏԻԱԾՆԵՐԸ

ԳԻՅԵ Լ 10 կող.



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Էլեկտրոնային տպագրության «ՀԵՐՄԷՍ» Ս. Պ. երկրամասի.
Մաղաք. փող. № 5.

1907 թ.

APM.

3-4159a

3-4159a AM-1239

№ 47

«ՅԱՌԱԶ»-ի ԳՐԱԴԱՐԱՆ

№ 47

389.14

Կ-13

Վ Ա Հ Ե

ԱՆՋԱՏԻԱԾ ՆԵՐԸ



ՄԻՅ. №22012

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Էլեկտրոնային սպարան «ՀԵՐՄԷՍ» Ա. Պ. Եղիզարեանի.
Մաղաք. փող. № 5.

1907 թ.

(8)

14320

07 AUG 2013

ԱՆՋԱՏԻԱԾՆԵՐԸ

I.

Արդէն կատարած փաստ է: Երիտասարդներէ մի փոքրիկ խմբակ, դժգոհ լինելով Հ. Յ. Դաշնակցութիւնից, անկարող զգալով այդ կուսակցութեան դրօշակի տակ իրենց «սօցիալիստական գործունէութիւնը» շարունակելու, մի քանի ամիս զանազան անունների տակ աղմկելուց յետոյ վերջապէս գտել են իրենց որոնած կայանը. նրանք միացել են սօցիալիստ յեղափոխականների կուսակցութեանը:

Ուրեմն չը կան այլ ևս ոչ «անջատականներ» կամ «զատողականներ», ոչ «երիտասարդ դաշնակցականներ», այլ կան հայ «սօցիալիստ յեղափոխականներ», որոնք այլ ևս ոչ մի անհու-թիւն ունենալ չեն կարող գաշնակցական անւան հետ:

Մեր նպատակը չէ այստեղ քննութեան անել, թէ հայկա-կան իրականութեան մէջ ինչ կարող է անել սօցիալիստ-յեփո-խականների այդ նոր մկրտած խմբակը, թէ որպիսի դրական ու բացասական ազդեցութիւն պիտ ունենայ նա հայ աշխատաւորու-թեան վրայ: Այդ ցոյց կը տայ մօտիկ ապագան: Իայց պարզել կատարած իրողութեան շարժառիթները, բնորոշել «անջատաւա-ծների» իսկական պատկերը—դա և անհրաժեշտ է և հետաքրք-րաշարժ, մանաւանդ հայ աշխատաւորների համար, որոնց հետ նրանք այսուհետև գործ պէտք է ունենան իբրև մի այլ կուսակ-ցութեան ներկայացուցիչներ:

Եթէ հաւատալու լինենք իրենց՝ անջատաւածներին, նրանք անջատոււմ են Հ. Յ. Դաշնակցութիւնից յանուն աշխատաւոր դա-սակարգի շահերի, յանուն անբիժ, անշեղ սօցիալիզմի, որին ծա-ռայել չէ կարող Հ. Յ. Դաշն., որովհետև նա բուրժուական կու-սակցութիւն է իր ամբողջ էութեամբ և իր երկարամեայ անցեա-լով՝ ազգայնական տենչերով ու թիւրքահայ դատով միմնացրել է



(1496-63)

1404-2001

հայ աշխատաւորները գիտակցութիւնը և այժմ այնքան վարարւած է բացասական յատկութիւններով, որ երբէք զուել ու մաքրուել չէ կարող:

Եւ այդ «յատկութիւններից» զերծ ֆնալու համար անջատուում են մեր ջերմեռանդ «սօցիալիստները»:

Չենք մեղադրում: Գուցէ նրանցից շատերն այդ համոզմունքն ունեն իսկապէս՝ անկեղծ ու անվերապահ համոզմունք: Բայց եթէ ուշի ուշով քննենք մօտիկ անցեալը, եթէ անցքերի մի փոքրիկ վերլուծում կատարենք, այն ժամանակ կը տեսնենք, որ հիմնովին սխալ է այդ համոզմունքը, որ «անջատածները» կամ դիւմամբ չեն ուզում կամ չեն կարողանում ըմբռնել իրերի բնական ընթացքը, իրենց մտածողութեան ու վարմունքի մէջ կատարւած մետամօրֆօզը՝ կերպարանափոխութիւնը և դրա բուն շարժիչները:

Ուշագրաւն այն է, որ գրեթէ բոլոր անջատածները, չնչին բացառութեամբ, չափազանց կարճ ժամանակ են եղել դաշնակցական շարքերում, նրանցից շատերը՝ հազիւ մի քանի ամիս միայն:

Եւ այդ շարքերին նրանք մօտեցել են այն ժամանակ, երբ մթնոլորտը ամբողջապէս բնկւած էր յեղափոխական տրամադրութեամբ, երբ ամեն մի երիտասարդի համար ամօթալի էր համարուում որ և է կուսակցութեան չը յարելը, յեղափոխական գործերով չը հետաքրքրուելը:

Ու նրանք յարում էին... Այդ շրջանում Կովկասում գործող կուսակցութիւններից Հ. Յ. Դաշնակցութիւնը գտնուում էր հմայքի մի այնպիսի բարձրութեան վրայ, զուգորդւած էր վառ գործունէութեան այնպիսի մի շրջանկարով, որ նրա գրօշակի տակ էին մտնում բոլոր նրանք, ով տոգորւած էր սօցիալիստական վարդապետութեամբ, բայց հակառակ սօցիալ-դեմօկրատիական դօգմատիզմին ու մանաւանդ գործելակերպին. ով արիւն ու մոխիր դարձած հայկական իրականութեան մէջ ուզում էր մի քայլ անել ի պաշտպանութիւն ճնշւածների, հալածւածների:

Այն, դա այն շրջանն էր, երբ իրենց դաշնակցական էին անւանում նոյն իսկ նրանք, ով ոչ մի առնչութիւն չունէր կուսակցութեան հետ և չէր էլ կարող ունենալ:

Կուսակցութիւնն այնքան գործ ունէր անելու, այնքան տարւած էր հայ աշխատաւոր ժողովրդի կեանքի ու գոյքի, ինչպէս

նաև քաղաքական անտեսական շահերի պաշտպանութեամբ, որ անկարող էր խոչնդոտներ յարուցանել վարարման այդ հոսանքի դէմ, խտրութիւն դնել իսկական ու ինքնակոչ դաշնակցականների միջև:

Այդպէս անցնում են ամիսներ: Հ. Յ. Դաշնակցութիւնը մի կողմից արիւնտ պայքարն է շարունակում ծանր զոհաբերութիւններով, իսկ միւս կողմից աշխատաւոր մասսաներին կազմակերպում ու նրանց ղեկավարում սօցիալիստական ուղիով:

Եւ այդ յախուճ գործունէութեան ամբողջ ընթացքում այժմ «անջատւած», իսկ այն ժամանակ թունդ «դաշնակցական այդ երիտասարդները» ոչ միայն չէին զգում որ իրենք էլ եռանդուն մասնակից են Հ. Յ. Դ. «բուրժուական, շօվինիստական մեղսաւից գործունէութեանը», այլ և երգում էին նրա անունով, վարդապոյն երազներ էին կապում նրա ապագայի հետ:

Դա ողբերութեան, հմայքի շրջանն էր Հ. Յ. Դաշնակցութեան համար և մեր «երիտասարդները» շատ լաւ էին զգում իրենց:

Բայց անա սկսում է դրան յաջորդող նոր շրջանը չափազանց բարդ անակնկալներով:

Հայ բուրժուազիան և նրա բերան մամուլը, տեսնելով Դաշնակցութեան այդքան յաղթական առաջխաղացութիւնը և յարածուն ազդեցութիւնը, բոլոր հնարաւոր միջոցներով արշաւանք է սկսում և մի չը տեսնւած վայնասուն բարձրացնում, գայլի արցունքներ թափում մերթ թիւրքահայ դատի, մերթ կովկասեան անդորրութեան անունից:

Սօցիալ դեմօկրատիան էլ տեսնելով, որ ապարդիւն են անցնում իր ջանքերը, որ հայ աշխատաւոր մասսան լայն-լայն շարքերով խմբւում է միայն Դաշնակցութեան գրօշակի տակ, իր կողմից ևս սկսում է արշաւանքը՝ մրցակից կուսակցութեան վարկը կտրելու, հմայքը տապալելու նպատակով: Եւ թափոււմ են անվերջ, անձայր զրպարտութիւնները, հայհոյանքները Հ. Յ. Դ. հասցէին:

Այդ երկու հոսանքների հետ զուգընթացաբար ծնունդ է առնում և երրորդը՝ Դաշնակցական զինւորների՝ խմբապետների կողմից, որ դժգոհութիւն է արտայայտում Դաշնակցութեան գործունէութիւնից. բողբքում է «Նախագծի» դէմ, ապօրինի յայտա-

բարուս այն և շեշտակի պահանջ դնում, որ Հ. Յ. Դ. թողնի սօցիալիզմը և միայն թիւրքահայ դատով զբաղուի:

Յարձակումներ աջից, ձախից և ներսից:

Հարկաւոր է անյողգոյող կամք, ամկուռ համոզմունք և պարզ ըմբռնողութիւն կուսակցութեան անցեալի, ներկայի և ապագայի վերաբերմամբ, որպէսզի առանց ընկճելու տեղացող յարձակումներից, քաջ գիտակից իրենց կոչման, անսասան շարունակէին առաջ տանել կուսակցութեան դրօշակը ազատագրութեան ու սօցիալիզմի մեծ ճանապարհով:

Այդպիսի յատկութիւններից զուրկ էին երիտասարդ դաշնակցականներից շատերը, ուստի և սկսուեւ է նրանց շարքերում վարանումը, երկմտութիւնը, որ շարունակելով յարձակումների ու կուսակցութեան ռազմիկ շարքերում մի քանի բախտախնդիր խմբապետների դաւերով առաջացած ներքին խլրտումների ազդեցութեամբ առաջ են քաշուած անշատման, այսինքն Հ. Յ. Դ. երկու հատուածների (թիւրքահայկական և կովկասեան) բաժանելու մտորումները:

II.

Ուշագրաւն այն է, որ թէև օրէցօր աճում էին յարձակումները Հ. Յ. Դաշնակցութեան հասցէին, թէև բախտախնդիր խմբապետները և անգիտակից զինուորները բուրժուական-կղերական «Մշակի» էջերից անընդհատ շանթեր էին արձակում, յոխորտանք կարգում դաշնակցական արհեստակցական միութիւնների և առհասարակ սօցիալիստ դաշնակցականների հասցէին, բայց և այնպէս հայ աշխատաւոր մասսան անուշադիր թողնելով այդ ամենը, մտնում էր Հ. Յ. Դ. դրօշակի տակ և կազմակերպում իր սօցիալ տեսեսական շահերը պաշտպանելու և ազատագրական մեծ գործին ծառայելու համար:

Դա մի պերճախօս ապացոյց էր, որ աշխատաւոր ժողովուրդն անստիճան հաւատ ունի դէպի նրա շիտակ ու արդիւնաւէտ գործունէութիւնը:

Եւ մեր «երիտասարդ դաշնակցականները» այդպիսի փաստի առաջ կանգնած երկմտում, տատանում էին, անկարող լինելով որոշելու իրենց դիրքը:

Ի՞նչ անել: Բաժանւել Հ. Յ. Դաշնակցութիւնից, հեռանալ նրանից:—Դա խելացիութիւն չէր լինի, որովհետև հեռացածները կը մնային գեներալներ առանց բանակի, մի քանի ինտելիգենտներ՝ առանց մասսայի, որովհետև աշխատաւոր ժողովուրդը Հ. Յ. Դաշնակցութեան հերոսական անցեալի լայն ազդեցութիւնից ու կենսունակ ներկայից տարւած՝ միշտ էլ նրա կողմը կը մնար:

Մնա՞լ դաշնակցական շարքերում և գործնական քայլերով ձգտել նրանց թերութիւններն ուղղել, անշեղ սօցիալիստական ուղիով ղեկավարել: Դա նպատակայարմար կարող էր թւալ միայն նրանց, ովքեր կենդանի գործը գերադասում են խօսքից, ներքին էութիւնն արտաքին փայլից. ովքեր ունենալով սօցիալիստական հաստատուն աշխարհայեցողութիւն, օժտւած են նաև անյողգոյղ հաստատականութեամբ և պատրաստ որոշ անձնագրհութեան՝ յանուն համոզմունքի, յանուն գործի:

Եւ այդպիսիները՝ որոնց շարքում նաև մեծ թւով երիտասարդներ, անում էին ինչ հնարաւոր էր կուսակցութեան գործերը կարգաւորելու, թերութիւնները վերացնելու համար:

Իսկ միւս «երիտասարդ դաշնակցականները» — այժմ անշատաւանները», որոնց սոււար մեծամասնութիւնը բոլորովին ծանօթ չէր թիւրքահայ իրականութեան ու Հ. Յ. Դաշն. անցեալ գործունէութեանը և իր տեղեկութիւններն այդ մասին քաղում էր հակադաշնակցական քննադատականներից — բուրժուական-սօց.-դեմօկրատական մամուլի էջերից. որ բացի դրանից լրիւ հասկացողութիւն չունէր նաև սօցիալիստական այն վարդապետութեան մասին, որի անունից սիրում էր յոխորտալից խօսել — որովհետև միտինգներում ճառեր լսելը, կամ մի քանի բրօշուրներ կարգալը գեռ բաւական չէ այդպիսի հասկացողութիւն կազմելու համար, — այդ «երիտասարդները» բաւական անյարմար դրութեան մէջ էին զգում իրենց, վճռականութիւն չունենալով կամ վերջնականապէս հեռանալու Հ. Յ. Դաշնակցութիւնից կամ իբրև իսկական դաշնակցականներ նրա զարգացման, դոման մասին հողալու:

Եւ անա այդ երեւուն մտքերին օգնութեան է համարում այն հանգամանքը, որ կուսակցութեան IV-րորդ ընդհանուր ժողովի քննելիք հարցերի մասին սկսուեւ են խորհրդակցութիւններ գանազան շրջաններում:

Ընդհանուր ժողովը, իբրև Հ. Յ. Դաշնակցութեան ամենա-

բարձր իրաւասու մարմինը, գումարելու էր կուսակցութեան ապագայ բախտը որոշելու, նրա հետ կապւած բոլոր բարգուծիւնները լուծելու, ծրագրային ու տակտիկային հարցերը մշակելու և թիւրքահայ դատի ու կովկասեան գործունէութեան փոխադարձ կապն ու յարաբերութիւնները սահմանազօծելու:

Հէնց այդ պատճառով նա մեծ հետաքրքրութիւն էր ներկայացնում ոչ միայն դաշնակցականներին, այլ նոյն իսկ հակառակորդներին, ինչպէս նաև ամբողջ հայ հասարակութեան համար:

Եւ դաշնակցական գիտակից ոյժերը, ինտելիգենտ շրջանները սկսում են նախապատրաստութիւնները ընդհանուր ժողովի համար: Հէնց այդպիսի նախապատրաստական խորհրդակցութեան նպատակով 1906 թ. սեպտեմբերին Թիֆլիսում տեղի է ունենում մի խումբ երիտասարդների ժողով, որտեղ և մասնակցում էին այժմեան «անջատւածների» լիդերներն իրենց կողմնակիցներով:

Ժողովը քննութեան է առնում կուսակցութեան վիճակը և տեսական այն հարցերը որոնց բարեյաջող լուծումը XV-րորդ ընդհանուր ժողովի կողմից, կարող էր միանգամայն ապահովել սօցիալիստական լայն գործունէութիւնը Հ. Յ. Դաշնակցութեան դրօշակի տակ: Նախ կանգ է առնում կօնկրեա խնդիրների և առանձնապէս թիւրքահայ դատի ու կովկասեան գործունէութեան վրայ, իսկ յետոյ տեսական հարցերի վրայ:

Ահա հէնց այդ ժողովում ձևակերպւած արտայատուում է «անջատականների» հոսանքը, որ ցանկալի է համարում թիւրքահայ դատը ամբողջապէս թողնելով Հ. Յ. Դաշնակցութեանը՝ կովկասում առաջ բերել մի նոր սօցիալիստական կուսակցութիւն, թերևս նոր անունով, որ ղեկավար դառնայ կովկասահայ աշխատաւոր դասակարգի, այսինքն անջատել երկու տարբեր երկիրների տարբեր գործունէութիւնները:

Սակայն ժողովականների միւս մասը անջատումը համարում է փաստակար և կողմնակից հազիսանում ֆեդերատիւ կապերի:

Այդպիսի հակառակ կարծիքների պայքարը շարունակւում է դրանից լիտոյ էլ՝ զանազան շրջաններում, զանազան վայրերում:

Ստեղծւում է մի յարմար վիճակ վերևում նկարագրած «երերուն երիտասարդ դաշնակցականների» համար: Իրանք մտում են անունով դաշնակցական, բայց միևնոյն ժամանակ a la «Մշակ-Մուրճ-Չայն-Կայծ-Հասանք» կուսակցութեանը հարւածող,

նրա գոյութիւնը փաստակար համարող: Եւ այդ բոլորը յանուն «անջատականութեան», յանուն իրենց հասկացած «ամբիժ սօցիալիզմի»:

— Տեղը եկաւ՝ Դաշնակցական, տեղը եկաւ՝ հակադաշնակցական—այդպէս էր դրանց նշանաբանը, որ իր արտայայտութիւնն ստացաւ նաև գրականութեան մէջ դրանց լիդերների գրչի արգասիքներով:

Բայց անջատման կողմնակիցների շարքերում կային և այնպիսիները, որոնք աւելի խորն էին նայում հարցին, աւելի կարևոր նշանակութիւն էին տալիս աշխատաւոր մասսայի կարծիքին ու տրամադրութեանը, քան դատարկ յոխորտանքներին: Եւ այդ կարծիքը պարզելու նպատակով նրանք «անջատման հարցը» մասսայական ժողովների առարկայ են դարձնում, թեր և դէժ բանաձևեր քննարկութեան են ենթարկում, որի հետևանքը լինում է այն, որ դաշնակցական բանւորութիւնը՝ միութիւններն ամբողջ շաքաթներով լսելով ու մասնակցելով այդ առիթով ծագած վիճարանութիւններին, գրեթէ միահամուռ համերաշխութեամբ հակառակ են կանգնում «անջատման» առաջարկին:

Այդպիսի պայմաններում գումարւում է Ընդհանուր ժողովը, որ իր հեղինակաւոր խօսքն էր ասելու կուսակցութեան շարքերը յուզող այդ խնդրի մասին:

Եւ «անջատականների» մեծ մասը խոհեմութեամբ սպասում էր այդ խօսքին, որպէսզի դրանից յետոյ որոշէ իր դիրքը:

Բայց բոլորովին այլ կերպ է վարւում դրանց միւս մասը, որ գլխաւորապէս Բագում էր կենտրոնացած:

III.

Անջատականների Բագւի խմբակը ոչ միայն չի լուծւում, չի սպասում Դաշնակցութեան ընդհանուր ժողովի որոշումներին, այլ ընդհակառակը: Կուսակցութեան այդ անցողական շրջանը՝ նախապատրաստութիւններ ընդհանուր ժողովի համար, ջանքեր—դաշնակցական անուն շահագործող բախտախնդիրներին զսպելու համար, ծայրայեղ համբերատարութիւն դէպի «միայն իրենց սօցիալիստ համարող մի քանի երիտասարդ դաշնակցականները» և վերջապէս դաշնակցական խմբերի ու միութիւնների մի մասի կազ-

մայրեձեւած և սպասողական վիճակը—այդ ընդ որը նպաստաւոր հանգամանք համարելով իրանց նպատակն առաջ տանելու համար, այդ խմբակը իր բոլոր ոյժերով հրապարակ է մտնում Հ. Յ. Դաշնակցութեան դէմ մաքառելու՝ թուրքիկներով, գրքերով, ձառերով այլ ձևերով:

Եւ այդ նպատակին հասնելու համար նա կանգ չէ առնում միջոցների առաջ: Այսպէս օրինակ, նա ընտրում է իր համար դեմագոգիական մի յարմար տիտղոս՝ «Երիտասարդ Դաշնակցութիւն», որպիսի մակագրութեամբ հրապարակ է հանում մի շարք գրքոյկներ, որոնցից երկուսը՝ «Դաշնակցութեան կրիզիսը» և «Ինչո՞ւ ենք անջատուում դաշնակցութիւնից»—(դրանց մասին յետոյ կը խօսենք)—յատկապէս Հ. Յ. Դաշնակցութեան դէմ ուղղած՝ նրա անցեալը դատափետող, իսկ ներկան կատարեալ մի չարիք համարող: Նոյն տիտղոսով կամ քիչ փոխւած՝ «Երիտասարդ դաշնակցականներ» անունով էին մակագրուում նաև դրանց թուրքիկները:

Ոսկայն միայն գրաւոր պրօպագանդը չէր, որ Դաշնակցութեան անուան տակ թագնւած ուղղւած էր հէնց նոյն Դաշնակցութեան դէմ, այլ և բանաւոր պրօպագանդը: Այդ նոյն անունով էին նրանք մտնում դաշնակցականների մէջ, նոյն անունով յատուկ քարոզիչներ ուղարկում գաւառից-գաւառ, քաղաքից-քաղաք, որպէս զի դրանք իբրև «անջատման առաքեալներ» նախապատրաստեն իող Դաշնակցութիւնը ներսից բանդելու, քայքայելու համար:

Եւ այդ «առաքեալների» հետ շրջում էին նաև թևաւոր լուրերը այն մասին, թէ սրբան բազմաթիւ են անջատման կողմնակիցները, սրբան վարդապետն է նրանց ապագան, նրանց աջողութիւնը:

Շուշում լուր է տարածուում, թէ Բագրի, Գանձակի, Թիֆլիսի, Երևանի, Ալէքսանդրապոլի դաշնակցական խմբերն են անջատական դարձել: Գանձակում նոյն լուրը կրկնուում է Շուշին էլ աւելացրած: Թիֆլիսում՝ նոյնը, Ալէքսանդրապոլում—նոյնը և այդպէս ամեն տեղ: Այդ լուրերին նայելով, այլ ևս Դաշնակցութիւն չը կար, այլ կային միայն «յաղթական անջատականների» կողմնակիցներ: Այն ինչ իւրաքանչիւր քաղաքում սոսկ անհատներ էին դրանք՝ մէկուսացած, աշխատաւոր մասսայից բոլորովին կտրւած:

Բայց «Երիտասարդ դաշնակցականները» իրենց ոյժը զգաց-

նել տալու համար ասպարէզ են քաշում ոչ միայն բարոյական, այլ նաև նիւթական միջոցներ: Այսպէս օրինակ միայն մի բանուորի դիմուժը բաւական է լինում, որ նրանք իսկոյն 100 ր. փոխադրեն Ալէքսանդրապոլի գործադուլաւոր արհեստակցական միութեանը (Կօնդիտեճների),—առանց նոյն իսկ տեղեկանալու դաշնակցական մարմիններից, թէ արդեօք հարկաւոր է նպաստը, թէ ինքը—Ալէքսանդրապոլի մարմինը ինչո՞ւ չի օգնում, թէ արդեօք հէնց այդ 100 ր. այդ ձևով տրւած դեմօրալիզացիայի չէ՞ ենթարկի բանւորութեանը:

Երևում է այդ հարցերը բոլորովին չեն հետաքրքրել մեր «Երիտասարդներին»: Նրանք իրենց զրական գործերի, «առաքեալների ու տարածած լուրերի հետ աւելորդ չեն համարել միացնել նաև այդ ձևի նիւթական ազդեցութիւնը:

Գուցէ այդպէս են ուզեցել «գիտակցութեան» բերել և կազմակերպել «կովկասեան Դաշնակցութեան մասսան», որ իր հսկայական և գորշ մեծամասնութեան մէջ ոչ գիտակից է, ոչ յեղափոխական է և ոչ էլ կազմակերպւած*):

Գուցէ այդպէս է թելադրում նրանց «զուտած սօցիալիստական մտածողութիւնը»: Բայց մենք այլ կարծիքի ենք: Մեզ թւում է, որ առհասարակ չափազանց տգեղ մի վարմունք է ոչ միայն այդ, այլ նաև՝ հայհոյել, վարկաբեկել, սևացնել մի կուսակցութիւն, քայքայման սերմեր ցանել նրա շարքերում, նոյն իսկ ժխտել նրա գոյութիւնը և այդ բոլորի հետ միասին ճակատին կայցրած պահել նոյն այդ կուսակցութեան անունը:

Այն, մեր «Երիտասարդ դաշնակցականները» ամիսներ շարունակ տրորում, սևացնում էին Դաշնակցութեան անունը, բայց դարձեալ նոյն անունն իրանց ճակատին պահում: Եւ այդ անշուշտ նրանք անում էին, որպէս զի դաշնակցական անուան հմայքը շահագործեն՝ իրենց կողմը մասսա գրաւելու համար:

Եւ այդպէս վարւում էին այն մարդիկ, որոնք հրապարակ էին մտել իբր թէ կեղծիքների, անմաքրութեան դէմ կուելու, աշխատաւորներին գիտակցութեան բերելու:

*) Տես № 3 հրատ. Երիտասարդ Դաշնակցութեան «Ինչո՞ւ ենք անջատուում»: Եր. 22.

Ո՛րպիսի հետևողականութիւն խօսքի և գործի:

Իրանից ոչ պակաս միտումաւոր է և «երիտասարդ» տիտղոսի գործածութիւնը: Կարծես նրանք, որ հակառակ են անջատման, երիտասարդներ չեն կամ «երիտասարդ» խօսքը ինքն ըստ ինքեան էպիտետ է մի որևէ քաղաքական-սօցիալիստական ուղղութեան:

Բայց գուցէ նրանք յանուն սօցիալիզմի ուզում էին «երիտասարդ տիտղոսն էլ շահագործել, որովհետև այդ տիտղոսով կարելի է գրաւել շատ պատանիներ: Չէ՞ որ պատանիների, երիտասարդների համար ցանկալի պիտի համարւէր աւելի «ձախ» թեքւել, «երիտասարդ դաշնակցականների» շարքը մտնել, քան թէ հների, ո՛չ երիտասարդների...

Իրանցից ով ժամանակ ու հնար չունէր հարցը խորքից ըննելու, բնականօրէն պէտք է ազդէր արտաքին երևոյթներից, այդպիսի ճոճաւան անուններից: Եւ այդպիսիներ կան և շատ կան «անջատւածների» մէջ:

Սակայն գուցէ մեզ առարկողներ լինեն, թէ այժմեան «անջատւածները» իրենց «երիտասարդ դաշնակցական» էին անւանում, որովհետև դեռ չէին որոշել իրենց անելիքը, դեռ չը գիտէին թէ ի՞նչ կուսակցութեան են յարելու...

Այդպէս: Մենք կասկածում ենք, որովհետև դրանք իբրև «գիտակից սօցիալիստներ» հէնց սկզբից ունէին «իրենց սօցիալիստական դաւանանքը», որից և պէտք է բղխէր այս կամ այն կուսակցութեան յարելը կամ մի նոր կուսակցութիւն հիմնելը:

Չէ՞ որ այդպէս յոխորտալից, առանց ընդհանուր ժողովի որոշումներին սպասելու այդքան հապճեպ մարտահրաւէր կարողալով Հ. Յ. Դաշնակցութեանը, դրանք պարզ ցոյց էին տալիս, որ վերջապէս խզում են իրենց կապը Դաշնակցութեան հետ:

— «Մենք կանջատւէինք այդ կազմակերպութիւնից, ասում է պ. Բիխարդ*» և այն ժամանակ, եթէ տաճկահայ դատը բնաւ գոյութիւն չունենար և Դաշնակցութեան միակ սպարէզը լինէր ուսական հայութիւնը:

Շատ գեղեցիկ: Բայց էլ ինչո՞ւ էիք սպասում. ինչո՞ւ ամբողջ

*) «Jid» էր. 20.

ամիսներով շահագործում էիք «երիտասարդ դաշնակցութիւն» տիտղոսը:

Ինչ էլ որ լինի «անջատւածների» պատասխանն այդ հարցին, այնուամենայնիւ լոյսի պէս պարզ կը մնայ գիտակից աշխատւորութեան համար, որ մաքրութիւնից հետո է այդպիսի մի վարմունքը և միանգամայն անվայել մանաւանդ այն մարդկանց, որ յաւակնութիւն էին ստանձնել տասն և եօթ տարիներ գոյութիւն ունեցող մի մեծ կուսակցութիւն ջլատելու, քայքայելու յանուն «անբիծ սօցիալիզմի»:

Բայց ի՞նչ եղաւ այդքան եռանդի յոխորտանքի, ներելի ու աններելի միջոցների արդիւնքը:

Տեսնենք:

IV.

Այժմեան անջատւածներից շատերը, իբրև նախկին դաշնակցականներ բաւական ժամանակ գործել են դաշնակցական խմբերի, միութիւնների մէջ, պրօպագանդ են արել, նրանց ընթացիկ գործերն են ղեկավարել—մի խօսքով կապւած են եղել նրանց հետ սերտ կապերով:

Հէնց այդ հանգամանքն էլ վարդապոյս յոյսեր է ներշնչել, թէ հնարաւոր է անջատելով Դաշնակցութիւնից, անջատել նրանից և աշխատւորների մի ստւար բազմութիւն:

Հէնց այդպիսի յոյսերով տոգորւած, անջատման «առաքեալները» ճանապարհորդում էին քաղաքից քաղաք, ժողովներ էին գումարում, զանազան շրջաններում արծարծում էին իրենց մտքերը, օգտւում իրենց նախկին կապերից, յաճախ անհատ բանւորների իրանց կողմը գրաւում, որպէսզի յետոյ կարողանան հէնց դրանց միջոցով ցանկալի նպատակին հասնել՝ բանւորական աւելի լայն խաւեր անջատման կողմնակից դարձնել:

Բայց... սրպիսի հիասթափումն: Աշխատուորութիւնն հէնց առաջին քայլափոխից նկատում է այդ կասկածելի դաշնակցականների միտումները և պատշաճաւոր ընդունելութիւն ցոյց տալիս նրանց:

— Սա ինչ հակասութիւն է, մտածում էին նրա գիտակից ոյժերը, այդ մարդիկ շաբաթներ առաջ մեր սկանչներն էին

դղրդացնում Դաշնակցութեան անունից, նրա դրօշակի տակ կազմակերպելու հրաւէր էին կարգում, իսկ այժմ ընդհակառակը՝ ամեն ինչ ոտքի տակ տալով՝ իբրև մի չարիք են պատկերացնում այդ նոյն կուսակցութիւնը և համոզում են հեռու փախչել նրանից՝ քանզի, ջլատել նրա հիմքերը: Մթթէ համոզւած մարդիկ այդպէս շուտ կարող են փոխել իրենց գործելակերպը...

Եւ գրեթէ ամեն տեղ յանուն անջատման արտասանած ճառերն ու առաջարկները մնում են միայն «ձայն բողբոջոյ յանապատի», առանց կարողանալու խախտել աշխատաւորութեան հաստատուն հաւատը դէպի Դաշնակցութեան սօցիալիստական ազատարար դրօշակը:

Ամիսների եռանդուն ջանքերը հազիւ կարողանում են միայն մի քանի անհատներ գրաւել դէպի հակադաշնակցական հոսանքի կողմը և միայն Բագում մի քանի հարիւր հոգուց բաղկացած բանուորութիւն. այն ինչ միլենոյն այդ վայրում դաշնակցական կազմակերպւած բանուորութեան թիւը 6—7000-ի էր հասնում:

Մինչդեռ եռանդուն «սօցիալիստները» իրենց ամբողջ թափով շարունակում էին այդ ուղղութեամբ գործունէութիւնը, վերջանում է Դաշնակցութեան ընդհանուր ժողովը և հրապարակ դրւում նրա շեշտակի որոշումը, որով յետ է մղւում անջատման առաջարկը, որովհետև՝

1) «Հայ աշխատաւոր ժողովրդի երկու հատւածների քաղաքական-տնտեսական կռիւը հիմնւած է միևնոյն ծրագրի վրայ վաւերացւած 1892-ին և լրացրած III. ընդհ. ժողովի որոշումներով և 1905-ի «Նախագծով»:

2) Թիւրքահայկական և կովկասեան գործունէութիւնները, ինչպէս այդ շեշտուեց ժողովի ընթացքում, ոչ միայն չեն ֆլասում, այլև նպաստում են երկու երկիրների աշխատաւոր ժողովրդի շահերի յաղթանակին:

3) Թիւրքահայ ժողովրդի շարժումը—որին կազմակերպութիւնը ծառայում է 17 տարիներից վեր, այժմ մանաւանդ, երբ թիւրքական ըէթիմից դժոճ տարրերը սկսել են շարժւել—պահանջում է համերաշխ գործունէութեան համար մեր յեղափոխական ուժերի կրկնակի լարումն ու շողկապումը»:

Եւ այդ որոշումը, ինչպէս և միւսները կատարում են իրենց շինարար դերը: Մի կողմից զսպում—բաքայւում են բախտա-

խնդիրները իրենց շահատակութիւններով, իսկ միւս կողմից անջատման կողմնակիցներից շատերն էլ յետ են կանգնում իրենց ցանկութիւնից և նորից անհրաժեշտ համարում Դաշնակցութեան դրօշակի տակ գործելը: Առաջին ազդանշանը այդ ուղղութեամբ տալիս է Մօսկւայի Դաշնակցական ուսանողութիւնը մի բովանդակալից բանաձևով, որով սխալ համարելով իր նախկին որոշումը անջատման մասին, եզրակացնում է.

— «Մենք Մօսկւայի բաժանողական դաշնակցական ուսանողներս գտնում ենք, որ վերոյիշեալ բոլոր պայմանները անհրաժեշտ և բաւարար հիմք են ներկայացնում սօցիալ-յեղափոխական հայ ինտելիգենցիայի համար՝ արդէն վերացւած համարել մի նոր սօցիալ-յեղափոխական հայ կազմակերպութիւն ստեղծելու պահանջի raison detre-ը և կոչ անել մեր բոլոր բաժանողական և անջատական ընկերներին, որոնք կանգնած են սօցիալ-յեղափոխական տեսակէտի վրայ՝ միանալ մեր որոշման և նորից համախմբւել կուսակցութեան շուրջը յանուն աշխատաւորութեան նւիրական շահերի»:

Եւ նախկին անջատականներից շատերն էին նոյն եզրակացութեան եկած: Մնում էր, որ տեղի ունենար դրանց վաղուց սպասւած կօֆերանսը, որ պէտք է վճռէր, թէ ընդհանուր ժողովի յիշեալ որոշումից յետոյ ի՞նչ է լինելու անջատման կողմնակիցների դերը:

Եւ կօնֆերանսը գումարւում է:
Սակայն «Երիտասարդ դաշնակցականների» լիդերները շատ լաւ իմանալով իրենց նախկին գաղափարակիցների մի մասի տրամադրութիւնը՝ նորից գործելու Դաշնակցութեան դրօշակի տակ, ձեռք են առնում բոլոր հնարաւոր միջոցները, որպէս զի դրանց թիւը շատ չը լինի կօնֆերանսում և իրենց իսկական «համախոհները» մեծամասնութիւն կազմեն:

Այդպիսով ժողովին մասնակցելու իրաւունքից զրկւում են մի ընկերոջ—(նախկին անջատական), որ գնացած էր յատկապէս բեֆերատ կարգալու Հ. Յ. Դ. IV-րդ ընդհանուր ժողովի որոշումների գործադրութեան մասին դաշնակցական շարքերում և ցոյց աալու այդ կուսակցութիւնից անջատւելու անպատեհութիւնը:

Նոյն ձևով գրկում են մասնակցութիւնից և Ե.-ից եկած երկու ուրիշ ընկերները և այլն:

«Երիտասարդ դաշնակցականները» լիգերների այդ ու նըմանօրինակ ուրիշ քայլերն այնքան զայրոյթ ու վրդովմունք են առաջացնում, որ նոյնիսկ ամենաթուեղ հակադաշնակցականը՝ «Սթափելու ժամանակը» գուշակող, «Դաշնակցութեան կրիզիսը» աւետող պ. Մրաւեանը, կուռում-հեռանում է կօնֆէրանսից, համարելով այն խաղալիք մի մարդու ձեռքին, որ գործում է ոչ թէ անկեղծ գաղափարականութիւնից դրդւած, այլ եսասիրութիւնից, կրքից ու փառամոլութիւնից:

Դրանից քիչ յետոյ ժողովում տեղի է ունենում երկրորդ պառակտումը. հեռանում են մի քանի ժողովականներ ևս, որոնք կողմնակից են լինում Դաշնակցութեան շարքերում մնալուն: Այնպէս որ վերջ ի վերջոյ կօնֆէրանսը դառնալով «ուղղափառ անջատւածների» մի հաւաքածու, զբաղւում է այն հարցով, թէ ի՞նչ ապագայ ստեղծէ իր հետևորդերի համար, ի՞նչպիսի խարխիս ընտրէ դրանց մտածողութեան ու գործունէութեան երեքուն նաւակի համար:

Եւ խարխիսը գտնում է: Կօնֆէրանսը որոշում է միանալ սօց.-յեղափոխականների իր կուսակցութեանը, այդպիսով վերջ տալով «երիտասարդ դաշնակցութիւն» տիտղոսին:

Եւ «սօց.-յեղ. կուսակցութեան Բագրի կազմակերպութիւնը յայտարարում է ի գիտութիւն բանւորների, որ նախկին «երիտասարդ դաշնակցականների» կազմակերպութիւնը միացել է այդ կուսակցութեանը, իբրև սօց.-յեղ. հայ կազմակերպութիւն...»:

Սակայն այստեղ էլ մեր «երիտասարդների» բախտը մնում է անորոշութեան մէջ, քանի որ յիշեալ ազդարարութիւնն յետոյ անմիջապէս լոյս է տեսնում նոյն կուսակցութեան աւելի բարձր մարմնի Անդրկովկասեան շրջանային կօմիտէի յայտարարութիւնը իր պաշտօնական օրգանում, որով շեշտում են, թէ—«սօց.-յեղ. կուսակցութեան կողմից ընդունելի է միմիայն լիակատար և անպայման միացումը, իսկ բոլոր միւս կազմակերպչական ձևերը, ի՞նչպէս օրինակ Ֆէդէրացիա, կամ Ֆէդէրացիայի լիակատար միացման միջի մի որ և է այլ ձևը, միայն կը խանգարէ սօց.-յեղ. գործունէութեանը կովկասում...»

Ուրեմն այսուհետև «Երիտասարդ դաշնակցականների» կազ-

մակերպութեան ինքնուրոյն գոյութիւնը դադարում է: Սօց.-յեղ. կուսակցութեան ոչ մի հայկական ֆրակցիա կամ հայկական կազմակերպութիւն, իբրև առանձին ինքնավար կազմակերպութիւն, իր գործադիր կամ օրէնսդիր օրգաններով գոյութիւն չունի...»

Ուրեմն այդ նոր ասպարիզում—սօց.-յեղ. կուսակցութեան ծոցում էլ մեր «երիտասարդ սօցիալիստները» տակաւին երեքուն և սպասողական կացութեան մէջ են: Մարմիններից մէկը յայտարարում է, թէ «նրանք միացել են իբրև սօց.-յեղ. հայկական կազմակերպութիւն», միւսը կտրականապէս ժխտում է այդ:

Թէև սօց.-յեղ. կենտրօնական կօմիտէն էլ միացաւ «Բագրի կազմակերպութեան» կարծիքին, այսինքն օրինաւոր յայտարարեց անջատւածներին իբրև «սօց.-յեղ. հայ կազմակերպութիւն» ընդունելը, բայց ինչպէս նոյն այդ կօմիտէն տեղեկացրել է Հ. Յ. Դաշն. արևելեան բիւրօին—կազմակերպական այդ ձևը միայն ժամանակաւոր է, քանի որ նա դեռ հաստատւած չէ սօց.-յեղ. կուսակցութեան ամենաբարձր ինստանցիաների, այսինքն խորհրդի ու ընդհանուր ժողովի կողմից: Ուրիշ խօսքով ասած՝ կարող է պատահել, որ մի քանի ամսից յետոյ դադարի առանձին սօց.-յեղ. «հայ կազմակերպութեան» գոյութիւնը, մանաւանդ որ նրա դէմ դեռ շարունակում են տրտնջալ կովկասեան սօց.-յեղ.-ներից շատ շատերը:

Յամենայն դէպս ինչ էլ որ լինի ապագան, այնուամենայնիւ ուրախալի է, որ վերջապէս «երիտասարդների» այդ խմբակը ազատեց Դաշնակցութիւնն իր շահագործումից և այսուհետև բանւորութեան մէջ մտնելիս այլևս չի թագնւի Դաշնակցութեան անւան տակ՝ նոյն այդ կուսակցութիւնը վարկաբեկելու համար:

Ամփոփելով մինչև այժմ առաջ բերւածը «անջատւածների» մասին, մենք տեսնում ենք, որ դրանք բաւական արագաշարժ ու բնորոշ մետամօրֆօզի են ենթարկւել ամենակարճ ժամանակաշրջանում և նպատակի հասնելու համար միջոցների մէջ էլ խտրութիւն չեն դրել:

Ուղղափառ «դաշնակցական», «անջատական», «երիտասարդ դաշնակցական»—ահա այն առժամեայ տիտղոսները, որ ունեցել են դրանք մինչև սօց.-յեղափոխականների «փրկարար փարոսին» հասնելը:



Մի քանի ամիսների անցեալ և այդքան բնորոշ կերպարանափոխութիւն՝ անունների, գործելակերպի...
Այդպէս է երբուն մաքերի արգասիքը, որ մենք պատմագրեցինք կուտարած փաստի թելադրութեամբ:

V.

Այժմ տեսնենք, թէ որո՞նք էին այն շարժառիթները, այն գործօնները, որ ստիպել են մեր «երիտասարդներին» այդպիսի ծանր դեգերումների մէջ ընկնել:

Իրա համար մենք առաջ չենք բերի բանաւոր պատճառաբանութիւնները՝ ժողովներում արտասանած ճառերն ու մեղադրանքները, գրանք կարող են անձիշտ լինել, լաւ չը մտածած, կրքի, րոպէի ազդեցութեան տակ աւելած:

Իսկ գրաւորները... Օ՛հ, դրանք երկար մտածած, «սիրելիով գրած» են, ուրեմն և աւելի ճիշտ ու մշակած: Ի՞նչ են ասում գրանք:

Սկսենք «Երիտասարդ Իաշնակցութեան» անդրանիկ Ձ 1 հրատարակութիւնից՝— պ. Մրաւեանի «Իաշնակցութեան կրիզիսից»:

64 լայն երեսներ պարունակեող մի գիրք է դա, որ գալիս է աւետելու, թէ «դարերից ի վեր հայկական համագգային անգործ լծի մէջ նեխւած ջրերը իրար են անցել» (եր. 1), թէ «կովկասահայ բուրժուազիայի դասակարգային կուսակցութիւնը՝ Իաշնակցութիւնը կրիզիսի մէջ է», քայքայւում է և այդ քայքայման ճարձատիւնի միջից լսում է «դիմումը դաշնակցական բանուորութեան», որը ցոյց է տալիս փրկութեան ուղին և յուզւած շեշտերով կանչում՝— ելեք, ելեք... այդ ուղիով առաջ գնալու:

Բայց սիվ գործանք: Իաշնակցական բանուորութիւնը կատարեալ արհամարհանքի մատնելով այդ «աւետումն ու դիմումը», ինչպէս նա այդ արեց նոյն հեղինակի մի ուրիշ գրածքի՝ «Ժամանակ է սթափուելու» վերաբերմամբ էլ, ընդհակառակը օրէցօր աւելի ու աւելի սեղմ շարքերով մօտենում է Իաշնակցութեանը՝ նրա ազատարար գրօշակն առաջ տանելու համար:

Ի հարկէ, այդպէս կը լինի, անշուշտ կը բացականչեն մեր հակառակորդները: Չէ՞ որ Իաշնակցութիւնն իր գործունէութեամբ մթնացրել է հայ աշխատաւորութեան ուղեղները. չէ՞ որ

դաշնակցական մասսան և անգիտակից է, և հակայեղափոխական էլ սրտեղից կարող է ըմբռնել այդպիսի իմաստուն մտքերը:

Հին ու մաշւած առարկութիւն, որ բազմիցս անգամ կըրկչնել են բոլոր հակադաշնակցականները՝ և սօց-դեմօկրատները, և մշակականներն ու կղերականները— իւրաքանչիւրն իր հասկացողութեամբ ընդունելով այդ: Այժմ էլ նոյնը կրկնում են «անշատւածները» ամենայն եռանդով:

Սակայն թողնենք այդ ու նմանօրինակ շարժուն դարձած անհիմն առարկութիւնները և դառնանք պ. Մրաւեանի գրածքին:

Մենք չենք առաջ բերի նրա բովանդակութիւնը, որովհետև մեր գրածքի սուղ էջերն ափսոս են դրա համար:

Այդտեղ ամբարնած է Իաշնակցութեան հասցէին, ուղղւած բոլոր մեղադրանքների շարանը. մեղադրանքներ, որ գալիս են ասելու, թէ «Իաշնակցութիւնը բուրժուազիայի դասակարգային կուսակցութիւնն է», մշակականութիւնն է, թէ նա ձգտել է «հայկական կառավարութիւն, թագաւորութիւն հաստատել», թէ նա շահագործել է տաճկահայ դատը, թէ նրա արհեստակցական միութիւնները Զուբատովեան կազմակերպութիւններ են, թէ նա հետու է եղել յեղափոխութիւնից, և այլն և այլն:

Մենք չենք պատասխանիլ այդ մեղադրանքներից իւրաքանչիւրին: Նրանք, բարեբախտաբար, թէ գծախտաբար, այնքան անհիմն են և անյալիսի անբարեխղճութեամբ յերիւրւած, որ գըրքի ընթերցողն ինքն արժանի գնահատութիւն կը տայ նրանց:

Բայց նմուշի համար վերցնենք մի երկուսը:

— «Ծնւած բուրժուական գաղափարների ծոցում, ասում է պ. Մրաւեան (եր. 17), Իաշնակցութիւնը հէնց սկզբից և եթ տարւած էր հայկական ինքնուրոյն կառավարութիւն, ինքնուրոյն պետութիւն, կամ ինչպէս ժողովուրդն է ասում, հայոց թագաւոր հաստատելու գերազանցապէս բուրժուական գաղափարով»:

Ծանօթ մեղադրական: Ընթերցողն անշուշտ յիշում է, որ տարիներ շարունակ հայակեր մամուլն է այդ երգը երգել Սուվօրիներին, Գրինգոմոնտների և Վելիչկօների բերանով: Տարբերութիւնն այն է, որ դրանք ամբողջ հայ ազգին էին վերագրում «հայկական թագաւորութիւն» հաստատելու տենչը, իսկ պ. Մրաւեան՝ միայն Իաշնակցութեանը:

Անշուշտ մոռացւած չէ և այն, որ անցեալ տարի բուրժու-

ական կղերական մասուլն էլ («Մշակ», «Մուրճ» և այլն) նոյն-
պիսի մեղադրանք էր հղումում, յայտարարելով, որ Դաշնակցու-
թիւնը մի գաղտնի կառավարութիւն է հայկական կեանքում, դրանով
իսկ կողմնակի կերպով «իսկական կառավարութեան» ուշադրու-
թիւն հրաւիրելով իրենց ատելի դարձած Դաշնակցութեան վրայ:

Եւ զուցէ դա ներելի համարի կրքից ու եսական հաշիւնե-
րից կուրացած այնպիսի մարդկանց համար, որպիսիք են Հ. Ա.-
ուաքելեաններ, Ռ. Սանազադներ, Լ. Սարգսեաններ և tutti quanti:
Բայց ինչ ասել մի մարդու—պ. Մրաւեանին, որ յեղափո-
խական լինելով, սօցիալիզմի ու աշխատուոր դասակարգի անու-
նից այնպէս յոխորտալից խօսելով հանդերձ, ընկնում է մի սև
խորխորատ, ուր չը կայ ոչ բարեխղճութիւն, ոչ էլ խելահա-
սութիւն:

Դաշնակցութիւնն ուզում է հայոց թագաւորութիւն հաստատել:
Բայց սրտեցից է բղխում դա:

Արդեօք այդ կուսակցութեան հիմնական ծրագրից*), որ
նպատակ է դնում (եր. 13) «թիւրքաց Հայաստանում ձեռք բերել
քաղաքական և տնտեսական ազատութիւն—ժողովրդական ռավի-
վար «կառավարութեամբ», «տարբեր ազգերի ու դաւանութիւնների հաւասարու-
թեամբ, խօսքի, մամուլի, ժողովների ազատութեամբ» և այլն, միև-
նոյն ժամանակ «սկզբունք ընդունելով, որ ամեն մարդ իր ճա-
կատի բրտինքով պիտի վաստակի իր կերած հացը, որ հաւասար
աշխատանքի հետ անհատը պիտի ունենայ նոյնպէս և հաւասար
իրաւունք կեանքէն օգուելու...» (եր. 11):

Արդեօք «Իրօշակի» էջերից, ուր արծարծել են ազգերի
իրաւահաւասարութեան, համերաշխութեան ու ֆէդերացիայի հար-
ցերը:

Արդեօք «Կովկասեան գործունէութեան նախագծից», որ
«պահանջ է դնում», որպէսզի Անդրկովկասը կազմէ ազատ Ռու-
սաստանի անբաժան մասը՝ կապւած նրա հետ Ֆէդէրատիւ կա-
պերով:

Թէ՛ Դաշնակցութեան գործունէութիւնից, որ միշտ ձգտել է
ճշւաճանքի, հարստահարւածների պաշտպանութեան՝ արիւնտա-
դրահարեութիւններով:

*) Տես «Մրազիւր» 1892 թ հրատարակութիւն:

Ոչ մէկից և ոչ էլ միւսից: Հարկաւոր է բոլորովին անծա-
նօթ լինել կուսակցութեան անցեալին և առնչաւորակ ազատա-
գրական շարժումների էութեանը կամ կրքոտ անբարեխղճութիւն
ունենալ, որպէսզի մարդ վեր կենայ և պնդէ, թէ «գերազանցա-
պէս՝ բուրժուական գաղափար է» ազատագրական այն շարժումը,
որի ղեկավարն է եղել Հ. Յ. Դաշնակցութիւնը, թէ վերջինս
«բուրժուակալի դասակարգային կուսակցութիւնն է եղել, որ
յետոյ վերածւել է նոյն բուրժուակալի օրգան կառավարութեան» (տես
Մրաւեան, եր. 18):

Սակայն, ինչպէս երևում է, պ. Մրաւեան այս դէպքում
«բուրժ. օրգան կառավարութիւն» ասելով, հասկանում է Դաշ-
նակցութեան գործունէութիւնը 1903 թևականից, երբ վերջինիս
ղեկավարութեամբ «հայ ժողովուրդը բոյկոտի էր ենթարկում
ռուսական կառավարչական հաստատութիւնները» (Մ. եր. 18) և
սեփական միջոցներով իր գործերը կարգաւորում:

Ժողովրդական այդ ինքնագործունէութիւնը, որքան էլ որ
թերութիւններ ունենար, այնուամենայնիւ նշանակալից էր յեղա-
փոխական տրամադրութիւնը բարձրացնելու տեսակէտից:

Բայց այլ կերպ է մտածում պ. Մրաւեան: Նրա սև ակնոց-
ների միջով ամեն ինչ սև է երևում, ինչ որ Դաշնակցութեան
հետ է կապւած, ինչ որ այդ կուսակցութեան գործունէութիւնից
է բղխում:

Եւ եթէ պ. Մրաւեանի տրամաբանութեանը հետեւելու լի-
նենք, պէտք է «բուրժուակալի դասակարգային օրգան» համա-
րենք և կովկասեան սօց.-դեմօկրատիային՝ նրա գործունէութեան
պատճառով Գուրիայում: Լատիշական սօցիալիստներին, լեհական
սօց.-կուսակցութեանը, որովհետև դրանք էլ իր ժամանակին ժո-
ղովրդական բոյկոտ ու դատաւարութիւնն էին ղեկավարում,
դրանք էլ ունեցել են դրական ու բացասական կողմեր:

Սակայն ոչ որ այդ կարծիքին չէ, որովհետև ոչ մի լրջմիտ
մարդ պ. Մրաւեանի տրամաբանութեանը չի հետևում:

Բայց Դաշնակցութեան միայն անցեալը չէ, որ յոռետես մտ-
րումների մէջ է գցում պ. Մրաւեանին, այլ նաև ներկան՝ զուտ
աշխատաւորական գործունէութեամբ ու կազմակերպութիւն-
ներով:

Այն, սև է, ամեն ինչ սև՝ այդ կուսակցութեան մէջ, պ.

Մրաւեանի նկարագրով, և՛ անցեալը, և՛ ներկան, և՛ հայդուկային խմբերը և ինքնապաշտպանութեան փոթորիկոտ կռիւները և բանւորական արհեստակցական շարժումն ու կազմակերպութիւնները: Լուսոյ ոչ մի նշոյլ Դաշնակցական մասյլ հօրիզօնում—այդպէս է նրա ամբողջ գրեածքի թողած տպաւորութիւնը: Եւ ուրիշ կերպ չէր կարող լինել, քանի որ հեղինակը ամեն ինչ սեպնում է, որպէս զի հաստատ է իր թեզը, թէ իսկապէս կրիզիս է՝ ահռելի, կործանարար կրիզիս:

Սակայն չը վրդովենք: Չէ՞ որ «Die Gedanke sind Zollfrei» (մտքերը մաքսից ազատ են), այսինքն ամեն մարդ ազատ է մտածելու, ինչ որ ուզում է: Եւ պ. Մրաւեանն էլ «մտածում է», սեւ ակնոցներով դիտելով Դաշնակցութեան հօրիզօնը:

«Դաշնակցութեան կազմակերպած պրօֆ. միութիւնները» ասում է նա (եր. 23.)—նպատակ ունին ոչ թէ պայքարել բուրժուական դասակարգի դէմ սօցիալիստական իդէալի իրագործման համար, այլ նրանք պայքարում են անմիջական շահագործողների դէմ բանւորական այս ու այն խմբի անմիջական շահերի համար, նրանք կուռում են ոչ թէ քաղաքական հողի վրայ, այլ նրանք հետապնդում են զուտ տեղական խմբական շահեր, որոնք ոչ մի կապ չունեն բանւոր դասակարգի քաղաքական դասակարգային շարժման հետ»:

Բաւական մութ հասկացողութիւն, որով պ. Մրաւեան ուզում է համոզել, որ եթէ բանւորական խմբերը կռիւ են մղում իրենց շահերի համար անմիջական շահագործողների դէմ—դա ՊՉ ՄԻ ԿԱՊ չունի դասակարգային քաղաքական կուռի հետ:

Բայց չէ՞ որ զբւտ տեղական-անտեսական շահերի համար պայքարող բանւորութիւնը հէնց անուշին քայլափոխումից բաղխում է քաղաքական խոչընդոտների հետ, քանի որ շրջապատող պայմաններին շնորհիւ ամեն մի փոքրիկ գործադուլ անգամ իշխանութեան «ուշադրութեանն» է արժանանում. չէ՞ որ հէնց այդպիսի գործադուլների պատճառով բանւորները յաճախակի ենթարկւում են հալածանքի, բանտի ու քրոտի և հէնց դրանով գործնականապէս ճաշակելով տիրող կարգերի ծանրութիւնը, գիտակցում, որ մեղանում անտեսական կռիւը միշտ էլ շահակապէս է քաղաքականի հետ, որ առանց քաղական ազատութիւնների արժէք չունեն անտեսական առժամայ յաղթանակներն անգամ:

Չէ՞ որ հենց տեղական մանր պայքարներն են, որոշ ուղղութեամբ կատարւած, որ միասին շողկալուելով ստեղծում են այն հսկայական շարժումը, որի անունն է դասակարգային կռիւ: Եւ այդ կուռի արտայայտութիւններն են, որ մերթ մեղմ, մերթ հուժու շեշտերով առաջ են մղում Դաշնակցական արհեստակցական միութիւնները, քաջ գիտակցելով նրանց թէ անտեսական ե թէ քաղաքական հետեանքները:

Կարող են լինել, ի հարկէ, թերութիւններ, սխախեր այդ կուռի ընթացքում, բայց դա դեռ իրաւունք չէ տալիս ժխտելու ամբողջ հոսանքը, անուանելու նրան դասակարգային կուռի հետ ոչ մի կապ չունեցող, ինչպէս այդ անում է պ. Մրաւեան:

Սակայն այդ դեռ բոլորը չէ: Պ. Մրաւեան իր ծայրայեղ յոռետես տրամաբանութեամբ տողորւած յայտարարում է, որ Դաշնակցութիւնը «զուրաւարտական միտումներ» է ունեցել արհեստակցական միութիւնների նկատմամբ, այսինքն կազմակերպել է նրանց անտեսական մանրիկ շահերն առաջ տանելու համար, որպէս զի բանւորութիւնը ձեռքից դուրս չը դայ, քաղաքական պայքարով չը տարւի:

Մի փոքրիկ բարեխղճութիւն, մի քիչ ծանօթութիւն իրականութեան հետ—և մենք կը տեսնենք, որ պ. Մրաւեանի այդ կարծիքն էլ կատարեալ մի զրպարտութիւն է:

Կովկասեան յեղափոխական կուսակցութիւններից ոչ մէկը անյնքան յամաս, անյնքան պարզորոշ պայքար չէ մղել յանուն արհեստակցական միութիւնների քաղաքական գործունէութեան, որքան Դաշնակցութիւնը: Եւ հէնց այդ գործունէութիւնն ապահովելու համար է, որ նա իր բոլոր միութիւնները կուսակցական-քաղաքական է դարձրել: Եթէ քննութեան առնենք կովկասեան անցքերի մօտիկ անցեալը, այն ժամանակ կը տեսնենք, որ չը կայ լուրջ քաղաքական-յեղափոխական ոչ մի քայլ, որին մասնակցած չը լինին Դաշնակցական միութիւնները: Մտա դէպքերում նրանք չը լինին Դաշնակցական միութիւնները: Նմուշի համար բաւական է յիշել կան ձեռնարկներ իրագործել: Նմուշի համար բաւական է յիշել այն փաստը, որ նոյն իսկ Շուշայ նման մի գաւառական քաղաքում Դաշնակցական արհեստակցական միութիւնները երկրորդ Դուռայի փակման առիթով միօրեայ քաղաքական գործադուլ իրականացրին այն ժամանակ, երբ ամբողջ կովկասում և նոյն իսկ

Ռուսաստանում «ծայրայեղ սօց. յեղափոխական» կուսակցութիւններին ոչ մէկը այդ առիթով ոչինչ չարեց: (Մենք հաշի չենք առնում թուցիկները, որոնք ինքն ըստ ինքեան յեղափոխական գործ չեն կարող համարել):

Այդ ու այդ տեսակ բազմաթիւ փաստերը ոչինչ են, ի հարկէ, պ. Մրաւեանի համար, որովհետեւ փաստերը չեն նրա ղեկավարը, այլ ծայրայեղ միակողմանիութիւնը, նախապաշարմունքն ու կիրքը:

Հէնց դրանով պէտք է բացատրել նաև այն անհեթեթ կարծիքը, թէ կովկասահայ բուրժուազիան է, որ ղեկավարել է Դաշնակցութեանը, որ դրն շահերից են թելադրած եղել Սասունի ապստամբութեան ու տաճկահայ շարժումները:

— «Եթէ կը գայ այն օրը, բացականչում է պ. Մրաւեան (եր. 49—50), երբ ապստամբութիւնը Սասունի լեռներում կը թիւղորւի տաճկահայ ժողովրդի եւ ոչ կովկասահայ բուրժուազիայի շահերից—(ընդգծուած մերն է. Վահէ)—երբ կարիք կլինի թողնել կովկասը՝ տաճկահայերի ազատագրմանը նւիրելու համար, ապա այդ ղէպընում գիտցած եղէք, որ մենք աշխատաւորներս կը լինենք առաջինը, որ մի կողմ կը դնենք մուրճն ու սալը և մի նոր Սաչակրաց արշաւանք կը սկսենք ղէպի Տաճկաստան»:

Գովելի պատրաստականութիւն մեծ գոհաբերութեան, բայց «երբ կարիք կլինի»: Իսկ մինչև այդ «երբ»-ի համեմելը՝ ի՞նչ անել...

Այդ հարցին ուղղակի պատասխան չի տալիս պ. Մրաւեան, սակայն նրա մտքերից կարելի է հետևցնել, որ ներկայումս ոչինչ չպէտք է անել և անցեալում էլ չը պէտք էր անել, որովհետեւ տաճկահայ շարժումը թելադրում է «կովկասահայ բուրժուազիայի շահերից», իսկ այդպիսի պարագայում ի՞նչ պէս կարող է մասնակցել, նպաստել աշխատաւորութիւնը, որ կուռն է նոյն այդ բուրժուազիայի դէմ:

Ո՛չ: Թող տաճկահայ ժողովուրդը ճնշի ու կեղեքի ծայրայեղ բարբարոսութեան հարւածներից, թող արեան ու արցունքի մէջ թաղէ իր հեծեծանքը, կեանքի ու գոյքի անապահովութիւնը, ընտանեկան պատւի ու սրբազան իրաւունքների ոտնահարումը — այդ բոլորը ըստ պ. Մրաւեանի տրամաբանութեան, չեն թելադրում տաճկահայկական յեղափոխական ըմբոստացում ու Սասունեան ապստամբութիւններ, այլ կովկասահայ բուրժուազիայի շահերն են դրանց թելադրողը:

Ընթերցողին ենք թողնում որակելու այդ կարծիքը:

Նա անքան ակներև է իր անհեթեթութեամբ, անքան հիմն, որ չարժէ մանրամասն քննութեան ու աւարկութեան ենթարկել:

Մենք վերջացնում ենք: Առաջ բերած նմուշները բաւական են գաղափար տալու համար, թէ ի՞նչպիսի «կրիզիս» է, որ պ. Մրաւեանը վերագրում է Դաշնակցութեանը, թէ ի՞նչպիսի մասըրտարով է մօտենում նա շօշափած հարցերին:

Գիտենք. նա շատ դիւրազգաց է և իրեն վիրաւորւած պէտք է զգայ մեր քննադատականից, ինչպէս նա այդ արեց «Ժամանակ է սթափուելու» գրքի առիթով ընկեր Վարանդեանի գրած մի այլ քննադատականի նկատմամբ:

Ցաւում ենք, քանի որ մենք մաղաչափ անգամ ցանկութիւն չենք ունեցել որևէ վիրաւորանք հասցնելու: Իսկ եթէ նրան ծանր է և անդուրեկան հէնց իր գրաւածքից բղխող դառն ճշմարտութիւններ լսելը—յանցաւորը մենք չենք:

Թող գոնէ ապագայում աւելի բարեխիղճ ու զգուշաւոր վերաբերմունք ցոյց տայ ղէպի մամուլը, ղէպի տասնևեօթ տարիների անցեալ ունեցող մի կուսակցութիւնը, որպիսին Դաշնակցութիւնն է:

Թող սիրէ իր զգացմունքները, բայց ճշմարտութիւնը դրանից էլ աւելի սիրէ:

Դառնանք այժմ անջատւած դաշնակցականների այժմեան իսկական լիզերի՝ պ. Բիխարդի գրածքին:

VI.

— «Ինչո՞ւ ենք անջատում Դաշնակցութիւնից» — այդպէս է պ. Բիխարդի գրքոյկի (23 երես) անունը:

Հեղինակը «մի գաւառացի ընկերոջն ուղղած նամակի» ձևով արծարծում է այն հիմունքները, որոնք դրդում են անջատել Դաշնակցութիւնից:

Այդտեղ բնականօրէն գլխաւոր տեղը բռնում է թիւրքահայ դատը:

— 2. Յ. Դաշնակցութիւնը իր հիմնարկութեան օրից ղեկավարում է այդ դատը, իսկ վերջերս էլ զբաղում է կովկասահայ

ակախ գործունէութեամբ. այսինքն միևնոյն կուսակցութիւնը գործում է երկու տարբեր երկիրներում, որ ֆաստիար մի քայլ է աշխատաւոր դասակարգի շահերի տեսակէտից. ուրեմն անշատեանք այդ կուսակցութիւնից, որպէս զի մասնակից չլինենք նրա ֆաստիար հակասօցիալիստական քայլերին, — այդպէս են առարկում անջատական երիտասարդները:

Եւ պ. Րիխարդ իր գրքոյկով գալիս է հիմնաւորելու նրանց առարկութիւնը: Բայց այդ «հիմնաւորումը» կայանում է նրանում, որ մի քանի նախադասութիւնով, առանց փաստական տեղեկութիւնների, նա յիշեցնում է որ Թիւրքահայաստանի ու Կովկասի պայմանների մէջ տարբերութիւն կայ:

Ոչ որ չէ ժխտում, ի հարկէ, այդ տարբերութիւնը: Բայց արդեօք այնքան խոշոր է նա, որ խոչնդոտ հանդիսանայ սօցիալիստական կուսակցութեան գործունէութեանը: — Ահա դա է կտրուորը, որ ինչպէս բոլոր անջատականները, նոյնպէս պ. Րիխարդ անպատասխան է թողնում, չէ պարզում, չէ հաստատում փաստերով:

Այն, տարբերութիւն կայ նաև միևնոյն երկրի զանազան գաւառների մէջ: Օրինակ, եթէ համեմատենք Բագուն, Թիֆլիզը և Բաթումը, Ալէքսանդրապոլի, Երևանի, Կարսի, ու Շուշայ հետ — կը տեսնենք, որ բաւական խոշոր տարբերութիւն կայ դրանց սօցիալ-տնտեսական պայմանների մէջ էլ:

Բայց մի՞թէ այդ տարբերութիւնը արգելում է սօցիալիստներին գործելու այդ վայրում, եկավարելով համապատասխան տակտիկայով:

Երբէք:

Տարբերութիւն կայ նաև գերմանական, աստրիական և ուսական Լեհաստանի միջև: Բայց մի՞թէ դա խոչնդոտ է Լեհական սօցիալիստական կուսակցութեանը (P. P. S.) տարածելու իր գործունէութիւնն այդ երեք երկրներում էլ:

Երբէք:

Այդ կուսակցութիւնը յայնուհետ լին աշխատաւոր դասակարգի շահերի՝ ղեկավարում է մի ընդհանուր աշխարհայեացքով և մի ազգային նպատակակէտով — ամբողջ Լեհաստանի անկախութեան գաղափարով: Երեք տարբեր պետութիւնների սահմաններում Կործող կազմակերպութիւնները միացնելով Ֆէդէրատիւ կապերով, նա կրում է մի ընդհանուր կուսակցական անուն «Լեհական

սօցիալիստական կուսակցութիւն» (P. P. S.) և սօցիալիստական միջազգային համագումարներին ու բիւրօյում մասնակցում է իրբն մի ամբողջութիւն: Այսպէս Ռուսաստանի և Աւստրիայի կազմակերպութիւնները միասին են ընտրել իրենց ներկայացուցիչը՝ դօկտ. Դիմանդին — միջազգային սօց. բիւրօյի համար:

Սօցիալիստական մի այլ կուսակցութիւն՝ ռուսիների սօց. դեմօկրատիան իր պաշտօնական ղեկուցագրում, Բրիւննի համաժողովին ներկայացրած *), շեշտում է, թէ — «անկարող է անտես առնել այն հանգամանքը, որ սահմանի միւս կողմում-Ռուսաստանում ուկրայնական ազգութեան մի խոշոր մեծամասնութիւնը բնակալութեան լծի տակ իրաւազուրկ է եղած, որպիսի փաստը տանում է նրան մահացման... Այդ իսկ պատճառով ռուսիական սօց.-դեմօկրատիան ձգտում է ձեռք բերել իր ամբողջ ազգութեան ազատութիւնը, որպէս զի միացած ու ազատագրւած ռուսի ժողովուրդը իրեն հաւաւար անդամ մտնէ միւս ազգերի շարքը»:

Այդպէս է ուրիշ տեղերում: Իսկ մեզանքում: Ռո՞տնք են այն ընկալ պայմանները, որ պէտք է ստիպեն Հ. Յ. Ռաշնակցութեանը ջլատելու, սահմանների համեմատ երկու հատւածների՝ Թիւրքահայկական և Կովկասեան — բաժանելու այն ժամանակ, երբ նա արդէն իրականապէս գործում է այդ երկու վայրերում էլ, ունենալով լայն հմայք ու ազդեցութիւն աշխատաւոր մասսաների վրայ:

— «Տաճկահայաստանի ժողովուրդը, ասում է պ. Րիխարդ (եր. 6—7), դեռ չէ մտնել ժողովրդական տնտեսական շրջանի մէջ... Ամեն մի գաւառ, ամեն մի անկիւն օպրում է իր ուրոյն տնտեսական կեանքով... առաջ չեն գալիս նոր դասակարգեր, և հին դասակարգերը չեն շերտաւորում, այլ բոլոր դասակարգերն էլ սնանկանում են»:

Ոչ ժողովրդական տնտեսութիւն, ոչ կապիտալ, ոչ էլ դասակարգեր ժամանակակից մտքով — ուրեմն այդպիսի պայմաններում «Տաճկահայաստանում, բացականշում է նոյն հեղինակը, սօցիալիզմը մի ուսուցիչ է, իսկ մեզ մօտ՝ Կովկասում նա մի անհրաժեշտութիւն է» (եր. 15):

Ուրեմն եթէ համերաշխային կապիտալիզմը իր ուղղակի ու

*) «Verhandlungen des Gesamtparteitages der Sozialdemokratie in Oesterreich» եր. 85.

կողմնակի ազդեցութիւնը լայն չափերով գցել է ամբողջ թիւրքիայի վրայ՝ նրա մայրաքաղաքից մինչև յետ ընկած գաւառները:

Եթէ եւրօպական կապիտալներով հաստատւած «Regie» ծխախոտա-ընկերութիւնը բառիս ամենալայն մտքով շահագործուծ է աշխատաւոր գիւղացիութեան ամբողջ երկրում, ինչպէս և թիւրքահայաստանում իր իշխանութեանը ենթարկելով ծխախոտագործութիւնը, հաւաքելով ծխախոտը և գործարաններում, ուր աշխատում են հազարաւոր բանւորներ, մշակելով և ապա շուկայ հանելով:

Եթէ զանազան կօնցեսսիաների միջոցով եւրօպական կապիտալները մոտք են գործում թիւրքիա և երկաթուղիական ու այլ տեսակի ձեռնարկներ սկսում:

Եթէ կալածատէր բէկերը, շէյխերն ու աղաները հետզհետէ կատարեալ պրօլետարներ են դարձնում աշխատաւոր գիւղացիներին, խաֆիրութեան *), Մարունայի **), սալաֆի ***) և միրաբայութեան ****) միջոցով սեփականացնելով նրանց հողերը, բամբելով նրանց արիւն քրտինքը, — դեռ չը հաշւած անվերջ բռնութիւններն ու բարբարոսութիւնները:

Եթէ նահապետական ձևի արդիւնագործութեան մէջ էլ կենտրոնացում ու աշխատանքի բաժանում է տեղի ունենում համա-

*) Պաֆիրութիւնը բռնապետական մի տուրք է, որ վերցնում են շիրք աղաները: Գանակը միջին հաշուով հասնում է իւրաքանչիւր ընտանիքից տարեկան 7 կոտ հացահատիկ, 8 նուկի բուրդ, մի լիւր իւղ, կէս լիւր մեղր, 2 ոչխար, 1 գույգ գուլպայ և մրգեղէն:

Պաֆիրառու աշխրթիներէից յայտնի են պալագցիները, խարչանցիները, ձիւլացիները և բագրանցիները:

**) Մարունա կոչւում է այն գործողութիւնը, երբ մէկը պարտք է տալիս, զբաւ վերցնելով տունը, եղները, հողը: Հողը զբաւ է դրւում 1—10 տարով: Պարտքը չը վճարելու դէպքում փողատէրը ծախում է զբաւը ամենաշնչին գնով:

***) Սալաֆը կեղեքման մի սոսկալի միջոց է: Փողը տրւում է կարիքաւորներին, նրանցից մթերքներով ստանալու պայմանով: Այսպէս օրինակ տալիս են

15—20	պիստոր	6	ամ.	յետոյ—մի	ոչխար=40—50	պ.
12—15	»	6	»	» —մի	» այծ=30—40	պ.
10—12	»	6	»	» —մի	լիւր ծխախոտ:	

****) Միրաբայութիւն—գա ճորտական մի գրութիւն է, որին ենթարկւում են խեղճ գիւղացիները, երբ պարք են վերցնում մի գումար և պարտաւորում իրենց եղներով, հողով ու երկրագործական բոլոր միւս պարագաներով ծառայել աղայի համար:

խրմբելով միևնոյն յարկի տակ հարիւրաւոր աշխատաւորներին, ինչպէս, օրինակ, շալագործութեան, կտաւագործութեան ու գորգագործութեան մէջ:

Եթէ հողի ու ազատութեան հարցը ոչ միայն հայ, այլ նաև թիւրք մասսային արթնացրել է և ոտքի է հանել ընդդէմ տիրող կարգերի:

Այդ բոլորը պ. Ռիխարդի ու նրա արբանեակների կարծիքով ոչինչ է և այդպիսի պայմաններում էլ սօցիալիստական ուղղութեամբ գործունէութիւնը «ուսուպիա»:

Գեղեցիկ տրամաբանութիւն, որին հետևելով սօց. կուսակցութիւնները պէտք է իսկոյն դադարեցնէին իրենց գործունէութիւնը Երևանի նահանգում, Կարսի նահանգում և ուրիշ շատ տեղերում, որովհետև դրանք էլ իրենց սօցիալ-տնտեսական պայմաններով նոյն վիճակումն են, ինչպէս Կարինի, Վասպուրսիկանի շրջանները: Ի՞նչով է տարբերւում, օրինակ, ուսական Բասէնը թիւրքական Բասէնից, կամ Կարսը, Ալէքսանդրապօլն ու Երևանը՝ Երզրումից, Մուշից ու Վանից: Ի՞նչու սահմանի այս կողմում, սօցիալ-տնտեսական այնպիսի պայմաններում, որպիսիք սահմանի այն կողմումն են տիրում, հնարաւոր է սօցիալիստական գործունէութեան, իսկ թիւրքաց Հայաստանում— ոչ: Այդ մասին և ոչ մի խելամիտ բացատրութիւն չեն տալիս պ. պ. «անջատւածները»:

—Անջատւենք, թողնենք տաճկահայ դատը ուրիշներին, քանի որ նա խանգարել է սօցիալիստական գործունէութեան, բացականչում են նրանք և դրանով մխիթարւում:

Սակայն այդպէս մակերևոյթօրէն տրամաբանում են միայն մեր «անջատւած սօցիալիստները», իսկ ով իսկապէս կանգնած է սօց.-աշխատաւորական հայեցակէտի վրայ և ծանօթ է թիւրքահայկական իրականութեանը, նա անշուշտ կը խոստովանի, որ այնտեղ էլ սօց.-կուսակցութիւնը շատ մեծ գործ ունի կատարելու և գործելու, նախապայմանները կան արդէն, թէև սաղմային, թէև փոքրիկ չափերով, բայց և այնպէս կան:

Հէնց այդ պայմանների շնորհիւ է, որ թիւրքաց Հայաստանում աշխատաւորական գործունէութիւնը սկսւած է արդէն և նոյն իսկ արհեստակցական միութիւնների գոյութիւն է տեսել Վանում, որ Դաշնակցութեան ջանքերը արդէ՛, դրական հետքեր են ցոյց տալիս նաև թիւրք աշխատաւորութեան մէջ, որը և մօտ

ժամանակներս կազմակերպել է մի նոր կուսակցութիւն՝ սօցիալ-լիստական աշխարհաճայեացքով՝ «Թիւրք յեղափոխական դաշակցականների» կուսակցութիւն, որ արդէն բանւորական շարժումը արտայայտել է սկսել առանձին գործադուլներով, որպիսիք 1907 թւի ընթացքում տեղի ունեցան Տրապիզոնում, Իլարբերքում և այլն:

Եւ այդ ու այդ տեսակ բազմաթիւ փաստեր աւելի ևս ամբապնդելով Դաշակցութեան հաւատը դէպի աշոգութիւն, պահում են և պահելու են նրա արիւնտ զբօշակը ամբողջ և անբաժան երկու երկիրների համար էլ:

Նա հայ աշխատաւոր ժողովրդի կուսակցութիւնն է, ուստի և պէտք է պաշտպանէ նրան թէ թիւրքահայաստանում, թէ կովկասում և այլ վայրերում, միշտ բարձր պահելով իր սօցիալիստական դաւանանքը և միշտ հովանաւորելով աշխատաւոր, բայց ճշւաձ, հարստահարւած և իրաւագօրելի զարձած մասսաների ազգային կուլտուրական, ինչպէս նաև տնտեսական դասակարգային շահերը:

Այն, թիւրքաց Հայաստանում ամենաառաջին անհրաժեշտութիւնն է քաղաքական ազատագրութիւնը և Դաշակցութիւնը շատ լաւ գիտակցելով այդ, իր կարևորագոյն պիտակը անուղղութեամբ է գործադրել և այսուհետև էլ գործադրելու է: Սակայն հէնց այդ ազատագրական շարժումն էլ պէտք է ունենայ որոշ ծրագիր ու գործելակերպ: Եւ քանի որ միայն սօցիալիզմի սկզբունքներից բխող գործելակերպն է ընդունակ բոլոր տեսակի ճնշումներին ու հալածանքներին վերջ տալու, ուստի անպայման ցանկալի է, որ թիւրքահայկական ազատագրութեան գործն էլ ղեկավարւի սօց. կուսակցութեան ձեռքով:

Ուրեմն եթէ նոյն իսկ միայն ազատագրական քաղաքական գործունէութիւն հնարաւոր լինէր թիւրքիայում, Դաշակցութիւնը—իրը սօց. մի կուսակցութիւն—բարձեալ պէտք է գործէր այնտեղ իր ամբողջ թափով: Եւ այդպիսի գործունէութիւնն երբէք չէ կարող որևէ վնաս հասցնել կովկասեան դասակարգային շարժմանը, չէ կարող «ուղեղներ մթնացնել»—ինչպէս ենթադրում են մեր պ. պ. «անջատւածները»:

Ահա այդ ու այդ տեսակ բազմաթիւ այլ դիտողութիւններն

ու փաստերն էին, որ ստիպեցին Դաշակցութեան ամենաբարձր մարմինն—Ընդհանուր ժողովին՝

—Միաձայն յետ մղելու անջատման տաշարկը:

Եւ այժմ կանգնած է Դաշակցութիւնը հայկական իրականութեան մէջ ամբողջ ու անբաժան և նրա զբօշակը իր հմայքով նոր ոգևորութեան շողբեր է սփռում գիտակից աշխատաւորութեան և գործօն ինտելիգենցիայի շարքերում:

VII.

Ընդհանուր ժողովի համերաշխ վերջաւորութիւնը մեծ ազդեցութիւն ունեցաւ բոլորի վրայ և նրա որոշումները՝ թէ ծրագրային և թէ գործնական, կատարեցին և դեռ կատարում են իրենց շինարար դերը:

Սակայն այլ կերպ է ժտածու պ. Բիխարզը. նրա աչքում այդ որոշումները ոչ մի արժէք չունեն, որովհետև—«Ընդհանուր ժողովը պատրաստ է ամեն ինչ տալու և ամեն ինչ վերացնելու. ամենին զիջելու և ամենին սպառնալու. միայն թէ Դաշակցութիւնը շարունակէ գոյութիւնը Պետերբուրգից մինչև Տիգրանակերտ, Ղարաբաղից մինչև Բօստօն»:

Որպիսի մտայլ պատկեր ուրեմն Դաշակցութեան ղեկավարներին համար չը կայ ոչ համոզմունք, ոչ էլ սկզբունք, այլ «ամեն ինչի» պատրաստականութիւն: Ուրեմն նրանք, որ մի ամբողջ կուսակցութեան հիմնադիր ու ղեկավար են եղել, նրանք, որ արիւնտ ու փշոտ ուղիով միշտ առաջ են տարել յեղափոխական զբօշակը, նրանք, որ երկար տարիներ յեղափոխական փառաւոր անցեալ ունեն. վերջապէս նրանք, որ ամբողջ շրջանի վստահութեան քէն են ստացել—դրանք բոլորը գուրկ են գիտակցութիւնից ու համոզմունքից և «պատրաստ ամեն ինչ ընդունելու»...

—Մեր խօսքը դրանց մասին չէ, գուցէ բացականչէ պ. Բիխարզը:

—Այն: Բայց չէ՞ որ Ընդհանուր ժողովին մասնակցողներին մեծ մասը հէնց այդպիսի դաշակցականներ են եղել, չէ՞ որ զբոսանց կարծիքներն են ուղղութիւն տալ բոլոր որոշումներին:

Բայց ըստ պ. Բիխարզի միայն Ընդհանուր ժողովը չէ այդպէս անսկզբունք, անգոյն, այլ և զրեթէ բոլոր Դաշակցականներն

ըը՝ տաճկահայ ընկերներից շատերը, ուուսահայ ընկերների մեծ մասը, քանի որ

«Նրանք կընդունեն և կադէտիզմ, և մարքսիզմ, և սօցիալ բե-
ւօլիցիօնիզմ, և սինդիկալիզմ, և ամեն մի ուրիշ «իզմ», որովհե-
տե նրանք այդ «իզմերից» և ոչ մէկին լուրջ նշանակութիւն չեն
տալիս»...

Այդպէս են դաշնակցականները պ. Բիխարդի նկարագրով,
իսկ «անջատւածները»: Օ՛հ, նրանք բոլորն էլ «գիտակիցներ» են:
Չէ՞ որ հէնց այդ գիտակցութիւնն է, որ նրանց ստիպում է ան-
ջատել, հեռանալ «անգիտակից» Դաշնակցութիւնից.

Եւ տեսէք, թէ պ. Բիխարդ ինչպիսի ուշադրութեան է ար-
ժանացնում այդ «գիտակիցներին»: Պօսելով թիւրքահայ իրակա-
նութեան մասին, նա միանգամայն անտես է առնում այն դաշ-
նակցականների կարծիքը, որոնք հէմիօրէն ուսումնասիրել են այդ
իրականութիւնը. ինչպէս նաև նրանց, որոնք հէնց այժմ էլ թո-
ղած անձնական հանգիստ ու վայելքներ՝ մտել են այդ դժոխք
երկիրը և ամենաչարքաչ պայմաններում դործում են այնտեղ և
կողմնակից են Դաշնակցութեան ամբողջութեանը և սօցիալիստա-
կան գործունէութեանը նաև թիւրքաց Հայաստանում. անտես է առ-
նում նաև տաճկահայ գործիչ-ընկերների ու մարմինների կարծիքնե-
րը և այդ ամենին հակառակ մի առանձին հրճւանքով շեշտում է, որ
իրեն հետ համաձայն են տաճկահայ գիտակից ընկերներից մի քա-
նիսը, որոնք երկու դատերի անջատումն են պահանջում» (եր. 21):

Չը գիտենք այդ թր «գիտակից տաճկահայերն» են, որ «ան-
ջատում են պահանջում»:

Արդեօք այն բախտախնդիրները, — միհրանականները, որոնք
բուրժուաների-մշակականների հովանաւորութեամբ բաւական
սղմուկ ու վայնասուն բարձրացրին, բայց Ընդհանուր Ժողովից
յետոյ բոլորովին քայքայւեցին ու լւեցին *):

Թէ՞ այն մի երկու պատանիները, որոնք ծագումով միայն
տաճկահայ լինելով, սակայն բոլորովին անձանօթ իրենց ծննդա-
վայրի պայմաններին, սիրում են հեղինակաւոր ու գիտակ ձևա-
նալ տաճկահայ իրականութեան վերաբերմամբ և մօղային հովե-
րով տարածւած յոխորտում են յանուն սօցիալիզմի, թէև նրա

*) Չենք կարծում, որ պ. Բիխարդը զրանց գիտակից համարէ:

ցութիւնն չեն ըմբռնում. «անջատւած» են համարում, թէև դե
պարզ չեն պատկերացնում իրենց աշխարհայեացքն ու յեղափոխա-
կան ուղին:

Թէ՞ դրանից զատ կան և ուրիշ տաճկահայ կողմնակիցներ
«անջատման», որոնք տակաւին յայտնի չեն, որոնք իրենց գի-
տակցութիւնն ու փրկարար կարծիքը թագնւած են պահել:

Չը գիտենք. պ. Բիխարդի գրեւծքում այդ կէտը կատար-
եալ մթութեամբ է ծածկւած:

Իսկ մեզ որքան յայտնի է, բոլոր տաճկահայ անկեղծ գոր-
ծիչները, բոլոր իսկական գիտակից ընկերները դէմ են անջատ-
ման և կողմնակից Դաշնակցութեան ամբողջութեան, որովհետև
այդ ամբողջութիւնից են սպասում յեղ. գործի աջողութիւնը:
Իրա կենդանի ապացոյցն է Ընդհանուր Ժողովի միաձայն որո-
շումը և Տաճկահայաստանից ստացւած կարծիքներն այդ մասին:

Սակայն մեր «երիտասարդ սօցիալիստները» թէև կողմնա-
կից են անջատման, բայց ընդունում են, որ «իւրաքանչիւր հայ
մարդ, մանաւանդ հայ սօցիալիստը պարտաւորւած է բարոյապէս
օգնելու տաճկահայերին քաղաքական ազատագրական գործին, օգ-
նելու կեանքով, զէնքով և դրամով»: (Բիխարդ, եր. 17):

Գեղեցիկ. գուցէ բացականչէ ընթերցողը, օգնել կհանրով, զէն-
քով եւ դրամով, այսինքն անել այն, ինչ որ դաշնակցականներն են
անում: Բայց իզուր է այդ ոգեորութիւնը, քանի որ նոյն պ. Բի-
խարդը հէնց նոյն երեսում շեշտում է, որ այդ պարտաւորութիւ-
նը՝ չէ կարող լինել պարտադիր»:

Ուրեմն պ. պ. «անջատւածներն» լուկ պլատօնական ցան-
կութիւն են յայտնում, թէ պէտք է օգնել տաճկահայ ազատա-
գրութեանը և ուրիշ ոչինչ: Նրանց կարծիքով Դաշնակցութիւնը
մինչև այժմ սխալ տակտիկա է ունեցել տաճկահայ դատի վերա-
բերմամբ և իր կազմով էլ՝ բուրժուական է՝ հակակրելի մի կադ-
մակերպութիւն, որից և հեռանում են, որպէսզի իրենց «գիտակ-
ցութիւնը չը մթնանայ», որպէսզի հայ աշխատաւորութեան «շա-
հերը փրկեն»:

Նրանց ասելով սօցիալիստական կուսակցութիւնն էլ չի
կարող տաճկահայ դատին պարտադիր կերպով օգնել, որովհետև
զրանից կը փաստի:

Հապա ի՞նչ անել:

Ոչ սօցիալիստական կուսակցութիւնը կարող է արտադիր կերպով օժանդակել տաճկահայ դատին և ոչ էլ «Դաշնակցութեան նման մի կազմակերպութիւնն» է կանգնած իր կոչման բարձրութեան վրայ: Ուրեմն ի՞նչ է ուզում պ. Բիխարզը, արդեօք այն, որ զուտ բուրժուական մի կազմակերպութիւն առաջ գայ յանուն Տաճկահայաստանի «քաղաքական ազատագրութեան»:

Այդ դէպքում մնում է զարմանալ, որ նա սօցիալիստ լինելով և տաճկահայ դատի անունով այնքան զեղուն զգացմունքներ յայտնելով հանդերձ, համաձայանում է այդպիսի յեղափոխական վեհ գործը թողնել ոչ սօցիալիստներին:

— «Մենք կօժանդակենք միայն այն կազմակերպութիւններին, բացահանչում է նա, որոնք բաժանում են մեր հայեացքը տաճկահայ խնդրի վերաբերմամբ և որոնց գործելակերպը մենք կը համարենք նպատակահարմար» (եր. 18):

Բայց այդ «ցանկալի է կազմակերպութիւնները» երբ և ո՞ւմ ջանքերով պիտի առաջ գան և ի՞նչ ծրագիր ու բնոյթ պէտք է ունենան—այդ մասին բոլոր «անջատածները» և նրանց լիզեր պ. Բիխարզ խոհեմաբար լուծւում են *), որովհետև անկարող են որևէ խելացի բան ասել:

Ուստի և այդ բոլորից յետոյ ընթերցողին մնում է եզրակացնել, որ նրանց բոլոր բարի ցանկութիւնները թիւրքահայ դատի վերաբերմամբ դատարկ բառերից այն կողմը չեն անցնում:

Այն, երեք տարի առաջ մի ուրիշ խմբակ էլ՝ «Սօց.-դեմ. Հայ կազակերպութեան» հիմնադիրները նոյնպիսի «ցանկութիւն» ու «պատրաստակամութիւն» էին յայտնում օգնելու տաճկահայերին, սակայն ամբողջ տարիներ անցան միմեանց յետևից, բայց գործնական օգնութեան մի նշոյլ անգամ չտեսանք դրանցից:

Այժմ նոյնանման «պատրաստակամութեամբ» անջատոււմ են և մեր նոր սօցիալիստները: Դրանք էլ պլատոնական ցանկութիւններ են յայտնում, դրանք էլ չեն ժխտում տաճկահայ ազատագրութեան օժանդակելու կարիքը... Բայց ի՞նչ օգուտ դրանից:

Այդպիսի խօսքեր յայտնում են օտարներն էլ, ամբողջ մարդասէր աշխարհը: Եւ կը յայտնէ ամեն մի սօցիալիստ՝ Նոր-Չե-

*) Ինչ որ պ. Բիխարզը գրում է իր գրքի 18—19 եր.— դա գործելակերպին է վերաբերում, բայց ոչ ծրագրին:

լանդիայից ու Եպօսիայից մինչև Ամերիկա. ի՞նչով պէտք է դրանցից տարբերւի հայ սօցիալիստը: Ըստ պ. Բիխարզի՝ ոչնչով: Խօսքեր, ցանկութիւններ,— դրանք առատօրէն թափոււմ են ամենքի կողմից:

Իսկ գործը. կենդանի գործը ո՞վ պէտք է առաջ տանի:

Դարձեալ միայն Դաշնակցութիւնը: Հէնց դրանումն է կայանում նրա վեհութիւնը, հմայքը, որ գաղափարական խօսքը միշտ էլ միացնում է գործի հետ: Հէնց այդպիսի յատկութեան համար է, Եւրօպայի լաւագոյն սօցիալիստներ՝ Կառլեյկի և Բեքնշտայն, Վանդերլեյդ, և Ժօրէս, Պրէսանսէ և Ֆերրի, դրանք բոլորը համակրանքի դործնական աջակցութեան ապացոյցներն են աւել այդ կուսակցութեանը և ապագայում էլ կը տան:

Պ. Բիխարզի կարծիքով «Դաշնակցութիւնը մի ազգային հիմնարկութիւն է...» իսկ այդպիսի «հիմնարկութիւն կը լինի և է իրապէս այն, ինչ որ հայ ժողովուրդն է» (եր. 6):

Եւ տեսէք, թէ իստապահանջ հեղինակը ի՞նչպիսի ատտեստացիա—վկայութիւն է տալիս այդ դաշնակցական ժողովուրդմասսայի մասին:

— «Կովկասեան դաշնակց. մասսան, ասում է նա (եր. 22), իր հսկայական և գորշ մեծամասնութեան մէջ ոչ զիտակից է, ոչ յեղափոխական է և ոչ էլ կազմակերպւած (ընդգծումը մերն է. Վ.): Վկայ են սրան դաշնակցական մասսայի ձեռքով կատարած բարբարոսութիւնները թուրքերի և հայերի վրայ. վկայ են այդ մասսայից ելած հազարեր միհրանականները, անիշխանաշինչները, հարուստ աղաների զինակիր նօքարները. վկայ է այդ մասսայի թի: քրատեցութիւնը և նրա անասելի սարսափը յեղափոխութիւնից» (ընդգծումը մերն է):

Ո՞րպիսի մռայլ նկարագիր. սրբան ծանր մեղադրանքներ մի կուսակցութեան՝ մի ամբողջ ժողովրդի հասցէին:

Բարբարոսութիւններ թուրքերի վրայ... Թուրքատեցութիւն. բայց սրտեղ և երբ: Եթէ խօսքը խաղաղ, նորմալ ժամանակի մասին է—դա բացարձակ սուտ է, որովհետև այդպիսի փաստեր գոյութիւն չեն ունեցել: Իսկ եթէ պ. Բիխարզը ակնարկում է հայ թուրքական ընդհարումների շրջանը—այդ էլ ծիծաղելի և շատ ուշացած փափկասրտութիւն է, քանի որ թէև արիւնահեղ կռիւն ինքնըստինքեան «բարբարոսութիւն» է, սակայն ամենանրբազգաց

մարդիկ անգամ երբեմն դիմում են այդ «բարբարոսութեանը», երբ մահւան վտանգի առաջ են կանգնած, երբ փրկութեան ուրիշ ճար չունեն: Ահա հենց այդպիսի պայմաններում են «Դաշնակցական մասսաների ձեռքով բարբարոսութիւններ կատարել թուրքերի վրայ», երբ հայկական ամբողջ գիւղեր, քաղաքներ արեան ու մոխրի մէջ էին լողում, երբ խաղաղութեան, համերաշխութեան կոչերը անհետ կորչում էին պրովակացիայի թանձրութեան և բէկերի ու խաների ձեռքին գործիք դարձած թուրք անգիտակից մասսաների մոլեգնութեան առաջ:

Այդ այդ ժամանակ դաշնակցականները ինքնապաշտպանութեան համար ցաւօք սրտի ստիպւած էին իրենց թուրք հարեանների դէմ ուղղել ոչ թէ սիրոյ գեղումներ կամ քնքրութեան արտայայտութիւններ, այլ մահալից սրեր ու զնդակներ: Գուցէ դա այժմ «բարբարոսութիւն» է պ. Րիխարդի տրամաբանութեամբ, բայց այն ժամանակ մի անհրաժեշտութիւն էր, քանի որ այդպէս էին թելադրում գոյութեան օրէնքը, ինքնապաշտպանութեան իրաւունքը: Ի՞նչ արած՝

Dure lex set Iex.

Հետաքրքրական է՝ ինչու իր ժամանակին պ. Րիխարդը և արբանեակները չէին բողոքում դաշնակցականների այդ «բարբարոսութիւնների» դէմ, այլ ընդ հակառակը, քաջալերում ու երբեմն նոյն իսկ ղեկավարում էին նրանց գործողութիւնները. ինչո՞ւ քաղաքից քաղաք անցնելով գովաբանում-հերոսացնում էին հէնց նոյն այդ բարբարոս մասսաներին»: Եթէ «դաշնակցական մասսան անգիտակից էր», չէ՞ որ իրենք այդ գիտակցութիւնից զուրկ չէին: Ուրեմն ի՞նչն է պատճառը: Արդեօք այն չէ՞, որ անջատելով Դաշնակցութիւնից, ուղում են այդ կուսակցութեան հետ կաււած բոլոր երևոյթները սեպնել, որպէսզի աւելի ցայտուն ու գրաւիչ երևայ իրենց քայլը:

Ապարդիւն ջանքեր...

Իսկ բարբարոսութիւնները հայերի վրայ... Օ՛հ, դա վաղուց յայտնի մեղադրանք է, որ մի ժամանակ բուրժուական մամուլն էր անընդհատ կրկնում սօց.-դէմօկրատների ձայնակցութեամբ: Այժմ էլ մեր «անջատւածներն» են նոյն երգում: Եւ թող երգեն որքան ուզում են. հասարակութիւնը գիտէ դրանց արժէքը:

Սակայն պ. Րիխարդը այլ «ծանրակշիռ» փաստեր ունի: Մի-

րանականները, անիշխանազինջներ ու աղաների զինակիր նօքարներ են դուրս եկել դաշնակցական մասսաներից. ուրեմն վերջիններս արժանի են վերևում յիշւած բոլոր ածականներին:

Միթէ: Այդ դէպքում, հետեւելով պ. Րիխարդի տրամաբանութեանը, ստիպւած պէտք է լինենք անգիտակից ու հակայեղափոխական անւանել և կովկասեան ամբողջ սօց. դեմօկրատիային, որի շարքերից առաջացել են ջուհուրիստները. և վրացի սօցիալ. ֆէդէրալիստներին, Ռուսաստանի սօց.-դեմօկրատ. ու սօց.-յեղափոխականներին, որոնց անդամներից շատերը դարձել են էքսպրօպրիատորներ ու շանտաժիստներ՝ և լեհական սօց. կուսակցութեանը, լատիշական սօցիալիստներին—մի խօսքով Ռուսաստանի բոլոր յեղափոխական կուսակցութիւններին:

Բայց այդպէս վարել կարող են միայն կրքից կուրացածները և Ձ Սուվօրին ու Գրինգմուտ: Իսկ առողջամիտ մարդիկ շատ լաւ գիտեն, որ այդ բացասական երևոյթները յեղափոխութեան ընդհանուր տեղատուութեան և նրան յաջորդող բէակցիայի արդիւնքն են գլխաւորապէս և երբէք բնորոշիչ չեն կարող լինել որևէ կուսակցութեան արժանիքները որակելիս:

Հապա դաշնակցական մասսաների (ըստ Րիխարդի՝ ամբողջ հայ ժողովրդի) «անասելի սարսափը յեղափոխութիւնից... Դա էլ մի ծանր մեղադրական է, որ շատ անգամ կրկնւել է վրացի սօց. դեմ. շովինիստների միտինգներում ու մամուլում. այժմ էլ կրկնւում է պ. Րիխարդի բերանով:

Յեղափոխութիւնից սարսափո՞ղ: Եւ այդ ածականը դրօշմւում է այն մասսայի ճակատին, որ դեռ 90-ական թւականների սկզբում առանց քաշելու կարսի նահանգում ծանրացած խիստ էկզեկուցիայից՝ շարունակում էր օգնել հայրենիքի «սուրբ յեղափոխութեանը»: Այն մասսայի, որ նոյն 90-ական թւականներին վերջերին սեփական դատարանների ու վարչութիւնների ցանցով էր ծածկել ամբողջ գաւառներն իրբև բողոք ու բօյկօտ պետական հիմնարկութիւնների դէմ, որ դեռ Պլեվէական խեղդող օրերին հերոսական ըմբոստացման փայլուն ապացոյցը աւելց կալւածական հարցի առիթով. որ առևանկան յեղափոխութեան վառ օրերին իր ուսերի վրայ տարաւ պրօվակացիայի ծանր լուծը և կովկասեան Վանդէան խաղաղացրեց գերմարդկային ձիգերով: Այդ մասսային «յեղափոխութիւ-

նից սարսափող» են անւանում և դա այն պատճառով, որ իբր թէ դրանք բոլորն էլ յեղափոխական ակտեր չեն *), որ հայ մասսան իր արեւնախեղդ ու մոխրի մէջ ծխացող օջախից բարձր կոչեր չէ հնչեցրել, «կեցցէ ընդհանուր յեղափոխութիւնը» յաճախակի չէ կանչել...

Թող ներւի մեզ, եթէ այդպիսի գնահատութիւնը հասարակական երևոյթների անւանենք և՛ գոեհիկ և՛ անբարեխիղճ:

Պ. Բիխարզը չէ զլացել իր գրեւծքը համեմել նաև ընդհանուր «իմաստալից մտքերով», որոնցից արժէ գէթ մի նմուշ առաջ բերել

—Ով որ և է ազատութիւն չէ տեսել, նա չէ կարող ցանկանալ մի աւելի մեծ ազատութիւն, և ով որ և է վայելք չէ ունեցել, նա չէ կարող ձգտել մի աւելի մեծ վայելքի» (եր. 12):

Հիանալի՛ փիլիսոփայութիւն, որ գուցէ արժէք ունենայ պ. պ. «անշատաւանութիւն» համար, բայց ոչ երբէք առողջ ու հասուն դատողութեան համար: Եւ իսկապէս, եթէ ճիշտ է այդ միտքը— հապա ինչո՞վ բացատրել պատմութեան ամբողջ ընթացքը, անթիւ անհամար փաստերը: Հապա ինչո՞ւ ազատութեան էին ձրգտում իլօտները և Սպարտակի փառապանծ գնդերը զլադիատօրներից բաղկացած, որ զուրկ էին ամեն տեսակի ազատութիւնից վայելքներից, որ ստիպւած էին միշտ տանջել ու արհամարել՝ ուրիշներին հաճոյք պատճառելու համար, հապա բոլոր միւս ըստրուկներն ու ճորտերը, ճնշւած—հալածւած ժողովուրդները (օրինակ թիւրքահայերը), դասակարգերը—էլ ինչո՞ւ են տքնում ջանքեր շոյալում: Ըստ փիլիսոփայութեան պ. Բիխարզի դրանք բոլորն էլ անկարող են ազատութեան ձգտել, որովհետև «որև է ազատութիւն չեն ունեցել»... Ուրեմն թող նստեն ու Փատալիզմին գերի դարձած սպասեն և հաւատացեալ մուսլիմների նման «Ալլահ ալեմ» մրմնջան, մինչև որ «մանանայի նման երկնքից թափւի որևէ ազատութիւն», «որև է վայելք», որպէսզի այդ ստոնալուց յետոյ միայն «աւելի մեծ ազատութեան ու վայելքի ձգտեն»:

Բայց կարծում ենք, ոչ ոք այդպիսի Փատալ քայլ չի անէ, որովհետև թէ անհատների, թէ դասակարգերի և թէ ամբողջ ժողովուրդների կեանքում միշտ դէպի վեր, դէպի բարձր ձգտելու

*) Այդ միտքն է արծարծում պ. Մրաւեան իր գրքում:

ընդունակութիւնն է, որ գործօն է հանդիսանում առաջադիւսութեան ու յեղափոխական շարժումների:

Իսկ պ. Բիխարզը թող ներէ մեզ, եթէ ասենք, որ նա թէև «սիրելով է գրել», բայց ըստ երևոյթին այնքան է տարւել հակադաշնակցական տրամադրութեամբ, որ չէ նկատել, թէ ինչպիսի անմիտ սովեստութիւններ, ինչպիսի անհիմն մեղադրանքներ ու անհետեողական դատողութիւններ է յերիւրել իր գրեւծքում: Մենք երկար կանգ առանք նրա գրքոյի վրայ, որովհետև դա «անշատաւանութիւն» «հաւատոյ հանգանակն» է համարում, «անշատողական» մտածողութեան quintessence:

Այժմ երբ մեր առաջ բացւած է դրանց անցեալը, կուսակցափոխութեան ելևէջների ու գրական արտադրութիւնների ամբողջ պատկերը, մեզ մնում է մի քանի խօսք ասել այն գերի մասին, որ խաղացել են և խաղում են սօց. յեղափոխականները իբրև Դաշնակցութեան «բարեկամ» մի կուսակցութիւն և դրանով վերջացնել մեր գրեւծքը:

X.

Սօցիալիստ յեղափոխականների կուսակցութեանը, որ երկար տարիների ընթացքում բարեկամական յարաբերութիւնների մէջ է եղել Դաշնակցութեան հետ—իբրև նման աշխարհայեցողութեան տէր մի կուսակցութեան հետ, որ թէ արտասահմանում և թէ այստեղ, կովկասում գործնական շատ հարցերում աջակցութիւն է ստացել նրանից և երբեմն փոխադարձը ցոյց տւել—քնականաբար պէտք է հետաքրքրւէր այն հարցերով, որ յուզում էին իր բարեկամ կուսակցութեան շարքերը:

Եւ նա հետաքրքրում էր: Բայց քանի որ հնարաւորութիւն չունէր հայ—յատկապէս դաշնակցական մամուլին հետեւելու և անմիջական ու անարատ աղբիւրներից բաղելու իր տեղեկութիւնները. քանի որ իրենք դաշնակցականներն էլ ներքին պայքարով և ընդհանուր ժողովի նախապատրաստութիւններով զբաղւած լինելով անկարող էին իրենց գործունէութեան մասին թարգմանօրէն նիւթեր մատակարարել օտար հասարակութեանը, ուստի սօց. յեղափոխականները ենթարկւում էին պատահական մարդկանց՝ գլխաւորապէս հակադաշնակցականների ազդեցութեան և

գրանց հաղորդած լուրերի վրայ հիմնում իրենց կարծիքը Դաշնակցութեան և նրան «քայքայող կրիզիսի» մասին:

Նոյն այդ պայմաններում նրանք թիւը գաղափար են կազմում և «երիտասարդ դաշնակցականներ» կոչող խմբակի մասին, դեմագոգիական այդ անուն և հէնց իրենց անջատականների անձիշտ տեղեկութիւնների շնորհիւ ենթադրելով, թէ դա մի խոշոր հոսանք է, որ իր կողմն ունի դաշնակցական գրեթէ ամբողջ ինտելիգենցիան:

Եւ հետաքրքրութիւնը զօրեղանում է օրէցօր: Անցեալ մարտ ամսին գումարած սօց. յեղափոխականների Անդրկովկասեան համագումարը ի միջի այլոց բնութեան է ենթարկում և այն հարցը, թէ ինչ դիրք. բռնել դէպի «երիտասարդ դաշնակցականները» և դալիս է այն եղբակացութեան, *) որ հարկաւոր է «առաջարկել նրանց մտնել սօց. յեղափ. կուսակցութեան շարքերը»:

Նոյն համագումարը հակառակ կարծիք է յայտնում սօց. յեղ. աւանձին հայկական կազմակերպութիւն ստեղծելու մասին:

Եւ այդ որոշումը տպագրելով, կուսակցութեան պաշտօնական օրգանը (ԱՅՅ. Յ. Օ. Կ.) կտրականապէս յայտարարում է, թէ «երիտասարդ դաշնակցականների համար միակ տրամաբանական ելքն է՝ լիակատար և անպայման ձուլելը ս. յ. կուսակցութեան հետ և ո՛չ թէ լիովին ձուլման ու ֆեդերացիայի մի կիսատ-պռատ խառնուրդ ուրւանկար ստեղծելը» **):

Նոյն համոզմունքին է և Անդրկովկասեան շրջանային կօմիտէն, ինչպէս այդ երևում է նրա գրասուր յայտարարումից:

Սակայն չընայելով այդ բոլորին, կենտրոնական կօմիտէի լիազօրը յատկապէս այդ խնդրի համար գալով Կովկաս, և ըստ երևոյթին չափազանց տարւելով «երիտասարդ դաշնակցականների» վարդազոյն խոստումներով ու անձիշտ տեղեկութիւններով, ս. յ. կուսակցական շահերի տեսակէտից աւելի օգտակար է համարում բաւարարութիւն տալ «երիտասարդների» ցանկութեանը թոյլատրելով կոչւելու «ս. յ. կ. հայկական կազմակերպութիւն»: Եւ կենտրոնական կօմիտէն էլ անտես առնելով ս. յ. անդրկովկասեան մարմնի, պաշտօնական օրգանի ու կովկասեան իրականու-

*) Տես «Известия «Заканк» О. К.» № 1, ինչպէս նաև «Партия. Изв.» № 8.
**) Ibid երես 8.

թեան հետ անմիջապէս շփուող անձերի կարծիքները, հաստատում է իր լիազօրի այդ կարգադրութիւնը:

Թէև, ինչպէս յայտնում է նոյն կենտրոնական մարմինը, այդ հաստատութիւնն էլ միայն ժամանակաւոր նշանակութիւն ունի, քանի որ կուսակցութեան Սորհուրդը և ընդհանուր ժողովը կարող են բոլորովին հակառակ որոշում կայացնել, բայց և այնպէս փաստն այն է, որ մինչ այդ Կովկասում գոյութիւն են ունենալու միևնոյն աշխարհահայեցողութեան երեք կազմակերպութիւններ:

1) Հ. Յ. Դաշնակցութիւնը իր ս. յ. ծրագրով.

2) Սօց. յեղ. Կովկասեան հատւածը.

3) Սօց. յեղ. կուսակց. հայ կազմակերպութիւն:

Ո՛րքան նպատակայարմար է դա աշխատաւոր դասակարգի շահերի և սօց. յեղափոխականութեան յաղթական առաջխաղացութեան տեսակէտից—ահա էական հարցը, որ անպատասխան է թողել լիշեալ որոշումը կայացնող մարմինը, ըստ երևոյթին մոռացութեան տալով նոյն իսկ հէնց իր կուսակցական մի օրգանի «Մ. Յ. Օ. Կ.» հետեւեալ իրաւացի տողերը *):

Այնպիսի պայմաններում—(այսինքն ու յեղ. ուղղութեան երեք կազմակերպութիւնների գոյութեամբ)—հայ գիւղացին և բանւորը պէտք է ընտրեն, թէ ո՞ր կազմակերպութեան անդամ դառնան: Ս. յ. կուսակցութեան: Ս. յ. կուսակ. հայ կազմակերպութեան, թէ՛ ս. յ. Դաշնակցութեան: Այդ երեքն էլ սօց. յեղափոխական խմբակցութիւններ են, այն ինչ պէտք է գտնել նրանց միջի տարբերութիւնը: Պարզ է ի հարկէ, որ սակաւ զարգացած մարդկանց գլխում դա կարող է առաջացնել միայն խառնաշփոթութիւն և տեղիք տալ թշնամական զգացմունքի դէպի այն կազմակերպութիւնները, որոնց չեն պատկանում այս կամ այն պատահականութեամբ»...

Եւ բնականօրէն այդ թշնամանքը աւելի սուր կերպարանք է ընդունելու դաշնակցականների ու «հայ կազմակերպութեան» տիտղոսի տակ գործող սօց. յեղափոխականների միջև, քանի որ դրանք գործելու են բացառապէս հայ մասսայի մէջ, որ իր ամբողջ հոգեբանութեամբ, ամենանւիրական զգացմունքներով կապւած է եղել և այժմ էլ կապւած է Դաշնակցութեան հետ, նրա

*) Տես № 1, երես 8.

արիւնոտ, բայց փառապանծ անցեալի, նրա ներկայ ծրագրի ու գործելակերպի հետ:

Կարո՞ղ է արդեօք այդ մասսան հաշտ աչքով նայել, թէ ինչպէս քիչ ժամանակ առաջ դաշնակցական համարւած մի խմբակ, այժմ ջանքեր է գործ գնում իր կողմը գրաւելու աշխատաւորներին, բանդելու-քայքայելու դաշնակցական միութիւններն ու խմբերը:

Կարո՞ղ է նա ուշադրութիւն ու հետաքրքրութիւն ցոյց տալ, երբ թերուսներ ու տգէտներ, որ առաջին անգամ Դաշնակցական շարքերում են սօցիալիզմի և յեղափոխականութեան մասին լսել և այդտեղ էլ իրենց գիտութեան պաշարը հաւաքել, այժմ ս. յ. դրօշակի տակ ամենաթունդ սօցիալիստներ ձեռնալով, անպատկառ լուտանքներով են խօսում Դաշնակցութեան կամ նրա ղեկավարների մասին:

Չենք կարծում: Մասան, որքան էլ որ գիտակից ու բարեկիրթ լինի, այնուամենայնիւ ունի իր ուրոյն հոգեբանութիւնը, որ զսպանակներ չէ ձանաչում և գիտէ արտայայտել պարզ ու անկաշկանդ կերպով:

Եւ այդ արտայայտութիւնը յամենայն դէպս չէ կարող լինել բարեկամական դէպի նորաստեղծ «հայ կազմակերպութիւնը»: Եւ քանի որ այդ «կազմակերպութիւնը» բուն է դրել սօց. յեղ. կուսակցութեան ծոցում, ուստի թշնամական զգացմունքը վերջ ի վերջոյ կարող է ուղղել նաև այդ կուսակցութեան դէմ,—մի բան, որ երբէք ցանկալի չէ կարող համարւել ընդհանուր գործի, սօցիալիստական գաղափարի տէսակէտից:

Ինչպէս երևում է, այդ մոայլ հեռանկարը որոշ հրկիւղ է ներշնչել սօց. յեղափ կուսակցութեան կենտրոնական մարմինն, ուստի և նա «երիտասարդ դաշնակցականներին» իբրև հայ կազմակերպութիւն» ընդունելով հանդերձ շտապել է ի տեղեկութիւն Դաշնակցութեան հասցնել, որ՝

- 1) Այդ «ընդունելը» միայն ժսմանակաւոր նշանակութիւն ունի:
- 2) Ս. յ. կուսակցութիւնը համայն սօց. յեղ. գործի տեսակէտից օգտակար է համարում, որ Կովկասում կազմակերպւեն ս. յ. ազգային կուսակցութիւններ՝ Ֆեդերատիւ կամ այլ տեսակ պայմանաւորւած կապերով կապւած ս. յ. կուսակցութեան հետ: Վերջինս այդպիսի կուսակցութեան հիմք համարում է Հ. Յ. Դաշ-

նակցութիւնը, քանի որ դա թէ ս. յեղափոխականների և թէ դաշնակցականների պատմական նպատակն է եղել:

3) Շատ ցանկալի է Անդրկովկասում գոյութիւն ունեցող ազգային ս. յ. կուսակցութիւնների ֆէդէրատիւ միութիւն:

4) Այդ բոլոր հարցերը որոշելու համար հարկաւոր է գուժարել Դաշնակցութեան և սօց. յեղափոխ. կուսակցութեան ներկայացուցիչների մի կօնֆերանս, որի ժամանակը և մասնակցողների թիւն որոշելը թողնւում է Դաշնակցութեանը:

Ի հարկ է Դաշնակցութեան կողմից դաշնակցականների համար ցանկալի է, որ վերջ դրւի ս. յ. տարտամ վերաբերմունքին և երկու կուսակցութիւնների համար ստեղծւի մի Modus vivendi:

Սակա՞ն դա աւելի ևս ցանկալի պիտի համարւի ս. յեղ. կուսակցութեան համար, քանի որ նրա ստեղծած «ս. յ. հայ կազմակերպութեան» գործունէութիւնը Կովկասում բացի խառնաշփոթութիւնից և հայ աշխատաւոր մասսաներին դեմօրալիզացիայի ենթարկելուց ուրիշ հետևանք ունենալու չէ: Հետևապէս որքան շուտ դրա առաջն առնւի, այնքան լաւ հէնց իրենց ս. յ. համար:

Իսկ Դաշնակցութիւնը: Այնքան լայն ազդեցութիւն ու հմայք ունի նա իր գործունէութեան վայրերում, այնքան սերտ կապերով է կապւած նա գիտակից աշխատաւորութեան ու յեղափոխական ինտելիգենցիայի հետ, որ մի քանի տասնեակ «երիտասարդների» անջատումը կամ մի նոր «հայ կազմակերպութեան» ստեղծւելը՝ թէկուզ ս. յ. հովանաւորութեան տակ, երբէք չեն կարող խախտել նրա հիմքերը, որ պինդ են ինչպէս անառիկ ժայռը և հաստատուն՝ որքան ինքը՝ հայ աշխատաւոր ժողովուրդը:

Նա հայկական իրականութեան մէջ հրապարակ գալով ամենածանր պայմաններում—միայնակ է հարթել իր յեղափոխական ուղին—աբիւնով, աւերակներով շրջապատւած և այժմ էլ միայնակ շարժում է միշտ դէպի առաջ, դէպի իր նպատակը:

Նա կարիք չէ զգում ինքնակոչ դատաւորների, որովհետև իր յեղափոխական խիղճն ու սօցիալիստական դաւանանքն է իր դատաւորը:

Նա կարօտ չէ և հովանաւորութեան, քանի որ ազատութեան ուղին է միայն նրա հովանին:

Բայց նա ամեն տեղ որոնում է անկեղծ ու գաղափարակից

դաշնակցականներ, որպէսզի դրանց հետ ձեռք ձեռքի տւած

Մէկ տեղ յողմենք, մէկ տեղ գործենք,


Մէկ տեղ թափենք մեր արիւններ...

բացականչելով, հասցնէ յեղափոխական կարմիր դրօշակը մինչև
այն բարձունքը, ուր սօցիալիզմի արևն է փայլում և իսկական
արդարութիւնն ու հաւասարութիւնը թագաւորում:

Եւ որտեղ գտնի այդպիսի դաշնակցականներ—նա նրանց
հետ է՝ թէ դժնդակ, և թէ փառունակ օրերին:

Իսկ «անջատւածները»... բարի հանապարհ նրանց: Թող
հեռանան: Թող նոր-նոր անուններով մխիթարեն իրենց: Մօտիկ
ապագան հեշտութեամբ կը ջախջախէ դրանց վարդազոյն յոյսերը,
էրազմերը և նրանք, որ իսկական յեղափոխականներ ու սօցիա-
լիստներ են, որ անկեղծօրէն նւիրւած են աշխատաւոր դասակար-
գի շահերին, կը զգան իրենց սխալը և կը զղջան, որ հեռացած
են զաղափարի ու գործի կուսակցութիւնից՝ Դաշնակցութիւնից:
Իսկ բոլոր միւսները, որ գիտեն միայն աղմկել՝ առանց դրական
գործի, որ սիրում են միշտ յոխորտալ «իմաստուն» ձևանալու
նպատակով, ուր էլ որ գնան, ինչ անուն էլ որ կրեն, ոչնչութիւն
է դրանց արժէքը:

Ընդ միշտ հեռու այդպիսիները Դաշնակցութիւնից:



1. Բախ.—Հարուստ. և աղքատ. II տպագրութիւն 15 կող.	28. Մ. Յովնաննիսեան.—Գաշն. և նրա հակառակորդները 50 կող.
2. Պեճէխօնով.—Հաց, լոյս և ազատութիւն 12 »	29. Ժ. Գեղ. եւ պ. Լաճուրզ.—Տեսնես, զարգ. և Սօցիալիզմ 5 »
3. Ֆէրօսովիչ.—Ինչպէս են ժողով. և ծախս. ժող. փող. 5 »	30. Նովոսօրժակի.—Ազգ. հարցը, Առնօժիտ և Ֆէդերացիա 7 »
4. Կարմեյիւկ.—Նոր լեռ. բար. 2 »	31. Խորամանկ կարգեր 7 »
5. Չեքոսլ.—Գիւլ. և բանւորը 15 »	32. Մ. Յովնաննիսեան.—Գող. հանգուցը (տաճկահ. խնդիրը վերջ. շրջ.) 20 »
6. Պեճեթրսօրժեք.—Ազգ. հարցը և սօց. դեմօկրատիան 5 »	33. Հրահանգներ գաւառ. համար 34. Վ. Չեքոսլ.—Դատարարական կառի թէօրիալի շարժը 10 »
7. Պրամպօլիկի.—Գիւլացիներ. 5 »	35. Լ. Շիւլօ.—Նաղազօյն ծրարագիրը 12 »
8. Ե. Ժուպիեան.—Արհատ. միութիւններ 15 »	36. Ս. Նեկրասով.—Ինչ կարգեր են հարկատու ժողովրդին 10 »
9. Նովոսօրժակի.—Ինչ է իրաւական պետութիւնը 15 »	37. Ա. Շախար.—Ֆէդերալիզմ և դեմօկրատիզմ 30 »
10. Ն. Կարանով.—Հող. հարցը Դոր-Ջելիանդիայում 2 »	38. Արամայիս.—Վնասակարը 4 »
11. Ժան Ժօրէս.—Բուրժ. սեփ. և նրա այսպէս գրաւումը 5 »	39. Արամայիս.—Մի բանի գլուխ հայ-թրքական ընդհար. 25 »
12. Ա. Արեղեան.—Գեմօկ. ընտ. 12 »	40. Մ. Յովնաննիսեան.—Կովկ. Վանդ. (հայ-թրք. ընդհար.) 25 »
13. Կառուցիլի.—Ազգութիւնների հարցը Ռուսաստանում 3 »	41. Շ. Գօրցիւ.—Ինչպէս իրականացուցիւ հատ. հատ. 7 »
14. Ա. Անարոնեան (Վարիք)—Ազատութեան ճանապարհ. 80 »	42. Գ. Ատմակ.—Գէպի ֆէդեր. 80 »
15. Ֆ. Լասալ.—Սահ.էութ. մաս. 5 »	43. Վ. Չեքոսլ.—Պրօլետար. և աշխատատուր դիւզացիութիւնը 18 »
16. Ա. Ն. Ինչպէս կարելի է լուծել հողային հարցը 12 »	44. Արամայիս.—Գիւլացին և բանւորը 3 »
17. Վ. Գալուբով.—Ինչ է ժող. 2 »	45. Է. Վանդեյեյիլ.—Բանւոր դատարար. դրութ. Ֆելդիայում 45 »
18. Ս. Ջաւարեան.—Վիճակագր. տեղ. գիւլ. ազգաբնակ. 25 »	46. Ս. Ջակ.—Հող և կապիտալիզմ 15 »
19. Ալփոնս Կիւնան—Ժողով. օրէնս. դաշ. Ջելիցերիայում 20 »	47. Վանկ.—Անջատումները 10 »
20. Իլիցեւիչ.—Ով ինչ է ապր. 7 »	48. Մ. Յովնաննիսեան.—Փրիսօփալ Սօցիոլոգ 15 »
21.—Մի գրոյց հողի մասին 5 »	
22. Լ. Շիւլօ.—Ազգ. ծր. հարցը 7 »	
23. Ա. Նիկոլայեւ.—Կօօպերացիա 5 »	
24. Շտապ. օգտ. ձևեր իրաւունք. 1 »	
25. Լ. Պեթրով.—Երկու ծրարներ 20 »	
26. Ս. Վ. Կոսեկ.—Պետ. կազմակերպ. հիմքերը Արևմտս. 12 »	
27. Անսիլի.—Գիւլաց. հարցը Ֆրանսիայում 7 »	

Պատրաստուում են տպագրութեան համար մի շարք ուրիշ գրքեր:

Դիալեյ՝ Բագու «Սասրուղիկիին»

Երևան.—Ս. Օհանջանեանին.

Թիֆլիս Նիկ. Մատինեսնին «Փարոս».

Յանկազօյնները կարող են ստանալ գրադարանի բոլոր գրքերը միասին, չըվճարելով ճանապարհածախսը:

2013

«Ազգային գրադարան»



NL0040760

